

Եվս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԴԱՌԱԶ



Եռամսյա պարբերականությամբ
հրապարակվում է
«Հարկատու» ամսագիրը

Բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝

www.tax.nk.am



14



18



28



34

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

tax ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

6

- 6 **Գոյապայքարից՝ անկախություն, վարչությունից՝ ծառայություն**
 ԼՂՀ հարկային ծառայությունը թիկունքում է թողել բոլոր ճգնաժամերը

tax ԼՈՒՐԵՐ

10

- 10 **Թեժ շփում**
 Սպառիչ պատասխան՝ հետաքրքրող հարցերին

tax ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12

- 12 **Գերակատարումների շղթա**
 Հարկային մուտքերն ապահովել են պետությունից եկամուտների 67.6%-ը

tax ՈՇՊՈՐՏԱԺ

14

- 14 **«Տան» գլուխը կին է**
 Ասկերանի շրջանի հարկային տեսչությունը՝ կանացի ձեռքի տակ

tax top

18

- 18 **ԼՂՀ անկախության 20 տարիները և հարկային ծառայության կայացումը**
 Ժամանակն արդյունավետ է օգտագործվել

tax ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ


22

- 22 **100 խոշորները մուծել են 10484.2 մլն. դրամ**
 Առաջատարն անփոփոխ է՝ «Բեյզ Մեթըլս»


tax ՈԼՈՐՏ

28

- 28 **Նոր պայմաններ՝ Արցախի գյուղացիների համար**
 «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ»-ն օգնում է գյուղատնտեսությանը



40



42



48



52

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

32 Ավանդական գուրթանի փոխարեն՝ «նորը»

Կովսականի վերաբնակիչների ձեռքբերումը՝ հանուն արդյունավետ մշակության

34 Հզոր տեխնիկա՝ առատ բերք

«Ագրոտնտեսություն թիվ 1»-ը զարկ է տալիս գյուղատնտեսության զարգացմանը

38 Երիտասարդները՝ գյուղատնտեսության դաշտը «հերկողներ»

ՀՊԱՀ-ն կրթում է գյուղատնտեսության ապագա մասնագետներին

tax NON սփանդար

40

40 Էկզոտիկա՝ Արցախում

Սպասում են բանանի առաջին բերքին

42 «Չարմանահրաշ ձմերուկի» պատմությունը

Ձմերուկի կորիզներն արտահանվելու են

tax ԲԻԶՆԵՍ

44

44 12 արտադրատեսակ՝ նոր սարքավորումներով

Հացաբուլկեղեն՝ բոլոր արցախցիների համար

46 Հնդկաձավար և ծխախոտ՝ «Մագիայի» նոր արդյունք

Գլխավոր խնդիրը ջրի և մասնագետի պակասն է

tax ԱՇԽԱՐՀ

48

48 Արևելասիական վագրի հարկային համակարգը

Սինգապուրը՝ բիզնեսի բարեկամ

50 Հարկային դաշտ «իշեցված» 10 «աստղերը»

52 «Երես առած» իտալացի ֆուտբոլիստները չեն վճարում հարկերը

ԹԵԺ ԳԻԾ
Վստահություն
Հրատապություն
Հետևողականություն
(+374 47) 974-758



ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ԹԻՎ 4(6) 2011

Գլխավոր խմբագիր՝
Նելլի Մանուչարյան

Հեղինակներ՝
Գայանե Ավագյան
Արմինե Մուսայելյան
Նորայր Հովսեփյան

Արտ խումբ՝
Գևորգ Գաբրիելյան
Նելլի Բարսեղյան
Նաիրա Պետրոսյան

Գովազդ և մարկետինգ՝
Հեռ.՝ 94 86 20

Հրատարակության 2-րդ տարի
Ծավալը՝ 52 էջ
Տպաքանակը՝ 2000

Տրված է տպագրության
20.02.12

Հեռ.՝ 94-86-20
Էլ. փոստ՝ info@taxservice.nk.am

Մեջբերումներ անելիս հղումը
«Հարկատու» ամսագրին
պարտադիր է:

Ամսագրի հղվածների մասնակի կամ
ամբողջական հեռուստառադիոընթերցումն
առանց «Հարկատու» ամսագրին
վկայակոչելու արգելվում է:

Ամսագիրը տպագրվում է
«Տիգրան Մեծ» տպագրատանը



ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏՆԵՐԸ

Հարկային դաշտը այն ոլորտներից է, որտեղ հնարավոր չէ աշխատել միայն մեկ ճակատով: 2007 թվականին հարկային պետական ծառայության աշխատանքները որոշվեց ուղղել երկու, առաջին հայացքից անհամատեղելի թվացող խնդիրների իրականացմանը՝ պետք ունեցող հարկային եկամուտների ավելացմանն ու հանրապետությունում բիզնես միջավայրի բարելավմանը: Սահմանվեցին հարկային պետական ծառայության նոր առաջնահերթությունները՝ խստացնելով դրանց ապահովմանն ուղղված քայլեր ձեռնարկելու պահանջը: Նախանշված առաքելությունը հստակ էր. պայքար ստվերի դեմ, վերահսկողական աշխատանքների ուժեղացում և հարկային ծառայություն-հարկատու փոխհարաբերությունների բարելավում: Ծրագրերի հիմնական մասը մեկնարկեց 2008-ին: Հենց այդ տարի գլուխ բարձրացրեց համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամը, որից ապահովագրվելու հնարավորություն կրցախը չունեին: Ավելին, ճգնաժամը բացասական էր ազդել հանրապետության ամենախոշոր հարկատուի՝ «Բեյզ Մեթըլս»-ի աշխատանքների վրա: Բնականաբար, դա արտացոլվել էր նրա կատարած հարկային վճարումներում. եթե 2007-ին «Բեյզ մեթըլս»-ի կողմից ապահովված հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերը կազմում էին պետք ունեցող հարկային եկամուտների ավելի քան 30%-ը, ապա 2008-ին այդ ցուցանիշը կիսով չափ կրճատվել էր: 2008-ի հաշվետվությանը հարկային պետական ծառայությունը տվյալները 2 տարբերակով էր ներկայացրել. մուտքեր՝ առանց «Բեյզ մեթըլս»-ի և դրանով: Առանց թիվ 1 հարկատուի մուտքերը 2007-ի համեմատ աճել էին շուրջ 55%-ով: Դա այն դեպքում, երբ մուտքերի կառուցվածքում լուրջ փոփոխություն խոստացող նոր տնտեսավարող սուբյեկտներ չէին գրանցվել: Այսինքն՝ այդ ծավալներն արդեն կային, մնում էր երևան հանել ստվերից և ապահովել համապատասխան հարկային մուտքերը: Այդ առաքելությունը հարկային պետական ծառայությունը պատվով կատարեց. հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմեցին 17 մլրդ 358 մլն դրամ՝ 2007-ի մակարդակը գերազանցելով 26%-ով:

2008-ը հարուստ էր նաև ծառայության ներսում կատարվող կառուցվածքային և կադրային փոփոխություններով: Աշխատակազմի կառուցվածքում ստեղծվեցին երկու նոր ստորաբաժանումներ՝ եկամուտների հաշվառման, պլանավորման և վերլուծության վարչություն և արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության տեսչություն, իսկ խոշոր հարկ վճարողների սպասարկման բաժինը վերակազմավորվեց խոշոր հարկ վճարողների վարչության: Կառուցվածքային ստորաբաժանումների միջև ստեղծվեց



Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն ապահովող միասնական ցանց, որը տեղեկությունն արագ փոխանցելու և ստանալու հնարավորությունն ընձեռեց: Հարկային համակարգում ժամանակակից թվային տեխնոլոգիաների ներդրումն իրականացնելու նպատակով էլ հարկային պետական ծառայությունում ստեղծվեց առանձին ստորաբաժանում: Հետագա աշխատանքները ծավալվեցին գերակա խնդիրներից մեկի՝ հանրապետությունում բարենպաստ բիզնես մի-

անգամ: Հսկողությունը կատարվում էր երկու ուղղությամբ՝ իրացման և ներմուծման: Արդյունքում միայն առևտրի ոլորտում գործող տնտեսվարողների կողմից իրականացված ներմուծման արձանագրված ծավալներում 2007-ի համեմատ 2008-ին 86%-ով աճ արձանագրվեց: Իրացման իրական ծավալների բացահայտման գործում մեծ տեղ զբաղեցրեցին հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանմանն ուղղված պարբերական ստուգայցերը,

ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՑ՝ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ հարկային ծառայությունը թիկունքում է թողել բոլոր ճգնաժամերը

2011 թվականը հայկական երկրորդ հանրապետության համար հոբեյանական է. սեպտեմբերի 2-ին լրանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 20-ամյակը: Հիշարժան տարեթիվը պետականաշինության ճանապարհին ունեցած ձեռքբերումներն ի մի բերելու և հետագա անելիքները հստակեցնելու առիթ է: Անկախության առաջին տարիները գոյապայքարի շրջան էին՝ անհամեմատ ավելի մեծ ռեսուրսներ ունեցող հակառակորդի դեմ: Հրադադարի հաստատումից հետո սկսվեցին պետականության կառուցման աշխատանքները: Անհրաժեշտ էր ոչ միայն հնարավորությունների սահմաններում վերականգնել պատերազմի տարիներին ավերվածը, այլև

հիմնովին փոխել պետական համակարգը: Կառույցը, որի իրավահաջորդն է ներկայիս հարկային պետական ծառայությունը, իր կենսագրությունն սկսեց անկախացումից ավելի ուշ: Համաձայն Արցախի Նախագահի՝ 1998 թվականի հունիսի 23-ի հրամանագրի՝ սկսեց գործել ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական վարչությունը: 2004-ին այն վերակազմավորվեց կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության: Նույն տարում էլ հաստատվեցին ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը:



ջավայրի ապահովման ուղղությամբ: Ստվերի դեմ պայքարը հռչակվեց ծառայության առաջնահերթություններից մեկը: «Խոշորացույցի տակ հայտնվեց» առևտրի ոլորտը. գրանցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մեծամասնությունը ներգրավված էր այդ ոլորտում, և ավելի մեծ էր չարաշահումների ու խախտումների հավանականությունը: Ամենառիսկային այդ բնագավառում աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվեց առևտրի ոլորտում իրականացվող հսկողական աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ: Արդյունքները չուշացան. 2008 թվականին առևտրի հարկից պետական բյուջե մուտքագրվեց 1 մլրդ 111 մլն դրամ՝ կազմելով նախորդ տարվա մոտ 220%-ը: Ստեփանակերտում հսկողության ուժեղացումը տվեց առավել նշանակալի արդյունքներ. 2007-ի ցուցանիշները գերազանցվեցին ավելի քան 2.5

որոնք չեղան ինքնանպատակ կամ տնտեսվարողների բնականոն աշխատանքը խանգարող: Սկսվեցին կամերալ ստուգումները, ինչի արդյունքում հարկային ծառայողների այցերը պակասեցին՝ դառնալով առավել հասցեական: Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև 2010-ին: Իրականացված 886 ստուգումների արդյունքում բյուջե մուտքագրվեց 788 մլն դրամ՝ շուրջ 50%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Քայլեր կատարվեցին խախտումները ոչ միայն բացահայտելու, այլև կանխարգելելու ուղղությամբ. հարկ վճարողների տեղեկացվածության մակարդակը բարձրացավ, հարկատու-հարկային մարմին հարաբերությունները բարելավվեցին:

2009-ը դյուրին տարի չէր. դեռ զգալի էին ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները: Առաջին վեց խոշոր հարկա-

տուներից մուտքերը շարունակում էին նվազել, փոխարենը բարելավվում էին «Բեյզ Մեթըլս»-ի ցուցանիշները: Տարվա արդյունքները հուսադրող էին. հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական վճարները կազմել էին 19 մլրդ 367 մլն դրամ՝ պլանավորված ցուցանիշը գերազանցելով 2.4, իսկ նախորդ տարվա մակարդակը՝ 11.6%-ով:

ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՂԹԱՅԱՐՈՒՄ

2010 թվականին ճգնաժամի հետևանքները մեղմացան: Խոշոր հարկատուներն աստիճանաբար վերականգնեցին և բա-

ները գոհացնող էին: Տարիների հետ մոտեցումները փոխվեցին. հասունացավ ռիսկային չափանիշները հաշվի առնելով ստուգումներ իրականացնելու պահը:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

2008-2009 թվականներին օրենսդրական բարեփոխումների մեջ նկատելի էր կառավարության որդեգրած հակաճգնաժամային ծրագրի ազդեցությունը: Ծրագրի իրագործման հարցում նշանակալի դեր էր վերապահված նաև հարկային



իրացման իրական ծավալների բացահայտման գործում մեծ տեղ զբաղեցրեցին հսկիչ-դրամարկային մեքենաների շահագործման կանոնների պահպանմանն ուղղված պարբերական ստուգայցերը, որոնք չեղան ինքնակառավարման տնտեսվարողների բնականոն աշխատանքը խանգարող: Սկսվեցին կամերալ ստուգումները, հարկային ծառայողների այցերը պակասեցին՝ դառնալով առավել հասցեական



Նկատելիորեն աճել է հասարակության հետ առավել ակտիվ շփումների և արդյունավետ կապերի ապահովմանն ուղղված աշխատանքների տեսակարար կշիռը: 2011-ի նորույթն այն է, որ առաջին անգամ հաստատվել է հանրային իրազեկմանն ուղղված իրականացվելիք միջոցառումների ծրագիր: Այդ ճանապարհին մեծ դեր ունի հարկային պետական ծառայության պաշտոնական կայքէջի և «Հարկատու» ամսագրի ստեղծումը

րելավեցին իրենց դիրքերը: Միայն առաջին 6 խոշոր հարկ վճարողների մուտքերը, հակառակ նախորդ երկու տարվա նվազման միտումի, 2009-ի համեմատ աճեցին

34%-ով: Հարկային մարմնի կողմից հավաքագրվեցին 21 մլրդ 584 մլն դրամի հարկային եկամուտներ, տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ՝ պլանավորված ցուցանիշը գերազանցելով 2.9, իսկ նախորդ տարվա մակարդակը՝ 11.5%-ով: Չուգահեռաբար՝ կատարելագործվեցին ստվերի դեմ պայքարի գործիքները: Ստեղծվեց առանձին ստորաբաժանում՝ ստուգումների պլանավորման և վերահսկողության գործառույթներով: Ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև գործարքների փաստաթղթավորման գործընթացը: Հակառակ բարդ ընթացքին՝ արդյունք-

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական ցանց, որը տեղեկությունն արագ փոխանցելու հնարավորություն ընձեռեց: Հարկային համակարգում ժամանակակից թվային տեխնոլոգիաների ներդրումն իրականացնելու նպատակով էլ հարկային ծառայությունում ստեղծվեց առանձին ստորաբաժանում

ծառայությանը: Հակաճգնաժամային քաղաքականությանը հաջորդեց զարգացման քաղաքականությունը: Օրենսդրական բարեփոխումների առումով նշանակալի եղավ 2010-ը:

Տարիների հետ որոշ խնդիրներ սրբագրվեցին: Այսօր հարկային պետական ծառայությունից ակնկալվում է ոչ թե պարզապես պետական մուտքերի ապահովում, այլ անմիջական մասնակցություն ընդհանուր զարգացումներին: Հետևողականորեն շարունակվելու են նաև համակարգի առողջացմանն ուղղված քայլերը՝ հնարավորին չափ զերծ պահելու համար չարաշահումներից: Հարկային պետական ծառայության աշխատանքների շնորհիվ՝ հաջողվել է ապահովել հավաքագրման բավական բարձր ցուցա-





նիշներ, կրճատել տնտեսական դաշտում առկա սովերային մասը: Հարկային ծառայության համար դրական գնահատական է եղել նաև պետքույզի եկամուտների՝ այս տարիների ընթացքում արձանագրված անընդհատ աճը: Առանձին հարկատեսակների մասով թվերն առավել խոսուն են.

- Ավելացված արժեքի հարկը 2010 թվականին 192%-ով գերազանցել է 2006 թվականի ցուցանիշը՝ 4 մլրդ 386 մլն դրամից դառնալով 8 մլրդ 406 մլն դրամ:
- Շահութահարկը 2010-ին գերազանցել է 2006-ի մակարդակը

2011-ին ծառայության աշխատանքները շարունակվում են նախորդ տարիներին հստակեցված առաջնահերթություններով: Այս տարի նկատելիորեն աճել է հասարակության հետ առավել ակտիվ շփումների և արդյունավետ կապերի ապահովմանն ուղղված աշխատանքների տեսակարար կշիռը: Տարվա նորույթն այն է, որ առաջին անգամ հաստատվել է հանրային իրազեկման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագիր: Վերջինով նախատեսվում է ապահովել հարկ վճարողների իրազեկումը և ուսուցումը, հասարակական, մասնավոր կազմակերպությունների ներկայա-



2008-ը հարուստ էր ծառայության ներսում կատարվող կառուցվածքային և կադրային փոփոխություններով: Աշխատակազմի կառուցվածքում ստեղծվեցին երկու նոր ստորաբաժանումներ՝ եկամուտների հաշվառման, պլանավորման և վերլուծության վարչություն և արտաքին ապրանքաշրջանառության հաշվառման և հսկողության տեսչություն, իսկ խոշոր հարկ վճարողների սպասարկման բաժինը վերակազմավորվեց խոշոր հարկ վճարողների վարչության



«խոշորացույցի տակ հայտնվեց» առևտրի ոլորտը. գրանցված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մեծամասնությունը ներգրավված էր այդ ոլորտում, և ավելի մեծ էր չարաշահումների ու խախտումների հավանականությունը: Ստեղծվեց առևտրի ոլորտում իրականացվող հսկողական աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ: Արդյունքները չուշացան

կը 2.5 անգամ՝ 511 մլն դրամից դառնալով 1 մլրդ 279 մլն դրամ:

- Եկամտահարկը 4 տարվա ընթացքում 1 մլրդ 85 միլիոնից դարձել է 2 մլրդ 5 մլն դրամ՝ 2006-ի ցուցանիշը գերազանցելով 185%-ով:
- Հաստատագրված վճարը 2006 թվականին կազմել է 300 մլն դրամ, իսկ 2010-ին՝ 526 մլն դրամ. արդյունքը գերազանցվել է 175%-ով:
- Առևտրի հարկը 2006-ին կազմել է 389 մլն դրամ, 2010 թվականին՝ 1 մլրդ 347 մլն դրամ. 4 տարի անց ցուցանիշը գերազանցվել է 3.5 անգամ:

Արդյունքում, 2010 թվականին հարկային պետական ծառայության կողմից հավաքագրված հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են 21 մլրդ 584 մլն դրամ՝ կրկնակի գերազանցելով 2006-ի ցուցանիշը՝ 10 մլրդ 855 մլն դրամը:

ցուցիչների և շահագրգիռ այլ անձանց մասնակցությունը հարկային բարեփոխումներին: Այդ ճանապարհին մեծ դեր ունի հարկային պետական ծառայության պաշտոնական կայքէջի և «Հարկատու» ամսագրի ստեղծումը: Շարունակվում է համակարգի տեխնիկական հիմքի արդիականացումը, որում նշանակալի դերակատարում ունեն հայաստանյան գործընկերները: Առաջընթացը զգալի է նաև հարկային եկամուտների հավաքագրման ոլորտում: Այս տարվա 9 ամսում հարկային եկամուտները, տուրքերը և սոցվճարները կազմել են 16 մլրդ 779 մլն դրամ՝ 3.1%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Ներկայացված թվերը հարկային պետական ծառայության անցած տարիների աշխատանքների արդյունքներն են արտացոլում: Հարկային ծառայությունը գիտակցում է, որ աշխատանքները պետք է լինեն թափանցիկ, տեսանելի և օրենքով սահմանված կարգով: Տարիների ընթացքում կայացած ծառայությունը շարունակելու է բարեփոխումների պարբերական ծրագիրը: Անփոփոխ է մնալու ԼՂՀ-ի բիզնես միջավայրը և հարկային դաշտը կատարելագործելու սկզբունքը:

❓ «Ա» կազմակերպությունը վարձակալել է փոքր տարածք՝ առանց դառնալու տվյալ տարածքի կենսագործունեությունն ապահովող կոմունալ ծախսերի ենթաբաժանորդ, քանի որ դրա կատարման համար պահանջվում են լրացուցիչ ծախսեր: Նման պայմաններում վարձատուն կարող է վարձակալից ստանալ կատարած կոմունալ ծախսերի փոխհատուցում:

Նշված պարագայում կոմունալ վճարները պայմանագրով պետք է ներառվեն վարձակալական վճարի մեջ (որպես վարձավճարի փոփոխուն մաս), որից հարկերը հաշվարկվելու են հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

❓ Հարկման առումով ո՞ր ծախսերն են համարվում ներկայացուցչական:

Ներկայացուցչական ծախսեր են համարվում հարկատուի կատարած այն ծախսերը, որոնք կապված են փոխշահավետ համագործակցություն հաստատելու և այն պահանջելու նպատակով բանակցություններ վարելու համար այլ հարկատուների ներկայացուցիչների, ինչպես նաև հարկատուի խորհրդի ու վերստուգիչ հանձնաժողովի նիստին մասնակցելու համար այլ մասնակիցների ընդունման և սպասարկման հետ: Այդ ծախսերի մեջ, մասնավորապես, ներառվում են ներկայացուցիչների (մասնակիցների) պաշտոնական ընդունելության (նախաճաշ, ճաշ կամ նման այլ միջոցառում), նրանց տրանսպորտային և հյուրանոցային ապահովման, մշակութային միջոցառումների կազմակերպման, բանակցությունների և մշակութային միջոցառումների ժամանակ բուֆետային սպասարկման, հուշանվերների, կազմակերպության հաստիքացուցակում չգտնվող թարգմանիչների ծառայության վճարման հետ կապված ծախսերը:

❓ Գործատուի նախաձեռնությամբ և նրա միջոցներից աշխատողի համար վճարվող առողջության ապահովագրական վճարները համարվո՞ւմ են արդյոք եկամտահարկով հարկման օբյեկտ:

Եթե կազմակերպության միջոցների հաշվին ֆիզիկական անձիք օգտվում են սովորական պայմաններում վճարովի հանդիսացող ծառայություններից, ապա այդ նպատակին ուղղվող միջոցները հանդիսանում են այդ անձանց համար օգնության կարգով ստացված եկամուտներ և հարկվում են եկամտահարկով ընդհանուր սահմանված կարգով:

❓ Ինչպե՞ս է որոշվում նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում հաստատագրված վճար վճա-

րող համարվող անհատ ձեռնարկատիրոջ ընթացիկ տարվա եկամտահարկի եռամսյակային կանխավճարի գումարը:

Անհատ ձեռնարկատերը, որը նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում եղել է հաստատագրված վճար վճարող, իսկ ընթացիկ տարում եկամտահարկը հաշվարկում և վճարում է ընդհանուր սահմանված կարգով, եռամսյակային կանխավճարների գումարները ընթացիկ տարում հաշվարկում է՝ հաշվի առնելով նախորդ տարվա համար հաշվարկված հաստատագրված վճարի մեջ եկամտահարկին բաժին ընկնող գումարները, այսինքն՝ «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հաստատագրված վճարի 40%-ը: Ընդ որում, նախորդ տարվա որևէ ժամանակահատվածում «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված սահմանային չափերը գերազանցած լինելու դեպքում՝ ընդհանուր սահմանված կարգով հաշվարկված եկամտահարկի գումարները ևս հաշվի են առնվում եռամսյակային կանխավճարների գումարների որոշման ժամանակ:

❓ Հղիության և ծննդաբերության նպաստներից եկամտահարկ պահվո՞ւմ է:

«Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ հղիության և ծննդաբերության նպաստները եկամտահարկով հարկման նպատակով եկամուտ չեն համարվում, այսինքն՝ համախառն եկամտի մեջ չեն ներառվում, և, հետևաբար, այդ եկամուտներից եկամտահարկ չի պահվում:

❓ Ինչպե՞ս է իրականացվում հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից ժամանակին չպահված եկամտահարկի գումարի պահումը:

Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից, ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկերի՝ սահմանված չափից ավելի պահված գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք օրացուցային տարվա համար:



ՆԻՍՏԻՆ ՇՓՈՒՄ ԹԵԺ



? *ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված տիրազուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած չդրոշմավորված ապրանքներն իրացնելիս ենթակա՞ են, արդյոք, դրոշմավորման:*

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բռնագրավված, հոգուտ պետության տիրազուրկ ճանաչված և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա չդրոշմավորված ապրանքների իրացումը կատարվում է ակցիզային դրոշմանիշերով, որոնք տրամադրվում են անհատույց:

? *Հնարավո՞ր է արդյոք հարկային մարմիններից ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերի վերադարձ:*

Հարկ վճարողների կողմից ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերը եռամսյա ժամկետում չօգտագործելու դեպքում ենթակա են վերադարձման՝ ձեռք բերման օրվանից մինչև եռամսյա ժամկետը լրանալու օրը ներառյալ, ընդ որում, ակցիզային դրոշմանիշերը չօգտագործված չեն համարվում, եթե դրանք փակցված են դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողների մոտ առկա պատրաստի արտադրանքի վրա: Վնասված ակցիզային դրոշմանիշերը ներկայացվում են հարկային մարմին՝ առանձին էջերի վրա փակցնելով և ապահովելով հետևյալ պայմանները.

1. ակցիզային դրոշմանիշը պետք է փակցվի առանց ծալքերի և անհարթությունների,
 2. պետք է պարզ երևան ակցիզային դրոշմանիշի սերիան և դրա կենտրոնական մասը,
 3. ակցիզային դրոշմանիշի պատռվածքի դեպքում պատռված մասերը պետք է միացվեն,
 4. վերադարձվող յուրաքանչյուր ակցիզային դրոշմանիշի մակերեսը(այդ թվում՝ հավաքված առանձին մասերից) պետք է կազմի իր սկզբնական չափի առնվազն 60%-ը:
- Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերը սահմանված կարգով հարկ վճարողի կողմից չվերադարձնելու կամ հարկային մարմնի կողմից հետ չընդունելու դեպքերում նշված դրոշմանիշերի թվին, տեսակին և տարողությանը համապատասխան պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար օրենքով սահմանված կարգով վճարվում է ակցիզային հարկ:

? *Պահատվության պայմանագրով պահառուի մոտ ե՞րբ է առաջանում ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն:*

Ի պահ վերցված գույքի հետ վերադարձման պահին, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, պահատուի հանդեպ պահառուի պարտավորությունը կատարված է: Ըստ այդմ՝ պահառուի համար ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն առաջանում է այն ժամանակ, երբ հետ է վերադարձվում այդ գույքը:

? *«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 27-րդ կետի համաձայն՝ ո՞ր թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատների իրացումն է ազատվում ԱԱՀ-ից:*

Թանկարժեք մետաղներից պատրաստված ոսկերչական նշանակության կիսաֆաբրիկատներն են՝

- Արծաթը(ներառյալ՝ արծաթ՝ ոսկու և պլատինի գալվանական պատվածքով)՝ չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով(ԱՏԳԱ 7106),
- ոսկին(ներառյալ՝ պլատինի գալվանական պատվածքով)՝ չմշակված, կիսամշակված կամ փոշու տեսքով(ԱՏԳԱ 7108),
- ոչ թանկարժեք մետաղները կամ արծաթը՝ երեսպատված(դրվագված) ոսկով, չմշակված կամ կիսամշակված(ԱՏԳԱ 7109),
- պլատինը՝ չմշակված կամ կիսամշակված կամ փոշու տեսքով(ԱՏԳԱ 7110),
- ոսկերչական իրերը և դրանց մասերը՝ թանկարժեք մետաղներից կամ մետաղներից երեսպատված(դրվագված) ոսկով(ԱՏԳԱ 7113),
- այլ ապրանքները՝ թանկարժեք մետաղներից կամ մետաղներից երեսպատված(դրվագված) ոսկով(ԱՏԳԱ 7115):

? *Առևտրի հարկ վճարող համարվելու ժամանակշրջանում՝ հարկման ընդհանուր կարգին անցնելուց հետո, հարկ վճարողի կատարած ծախսերը ենթակա՞ են նվազեցման:*

«Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով իր կողմից եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից(հաշվեգրման եղանակ)՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հետևաբար առևտրի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելիս ստացվող եկամուտներից չեն նվազեցվում առևտրի հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանին վերաբերող ծախսերը:

? *Առևտրի հարկ վճարողները «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի պահանջների խախտումով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ի՞նչ ժամկետներում են պարտավոր վճարել բյուջե:*

Առևտրի հարկ վճարողները «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտումով ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում կատարելու դեպքում պարտավոր են առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը վճարել պետական բյուջե առևտրի հարկի վճարման ժամկետում(մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը): Ընդ որում՝ բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները արտացոլվում են առևտրի հարկի հաշվարկում:

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԵՆ 2011-Ի 9 ԱՄԻՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ 67.6%-Ը

2011 թվականի 9 ամիսների՝ ԼՂՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 11842856.7 հազ. դրամ՝ ծրագրային մուտքերից 2.8%-ով ավելի: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 1248303.2 հազ. դրամով կամ 11.8%-ով: Հարկային եկամուտների հաշվին ապահովվել է պետական բյուջեի եկամուտների 67.6%-ը: Գերակատարվել են պետական բյուջեի հարկային եկամուտների բոլոր եկամտատեսակների պլանային առաջադրանքները:

2011 թվականի 9 ամսվա կտրվածքով ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են

6091429.6 հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 51.4%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 34.8%-ը. պլանավորված ցուցանիշը կա-


Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի 2011 թվականի 9 ամսվա մուտքերը կազմել են 4657110 հազ. դրամ (հաշվի առնելով նաև ծախսերի չափը՝ 364929.7 հազ. դրամ) կամ պլանավորված ցուցանիշը կատարվել է 103.9%-ով և ավելի է 174410 հազ. դրամով

տարվել է 100.6%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱԱՀ-ի գծով ԼՂՀ պետական բյուջեի

մուտքերը աճել են 461137.2 հազ. դրամի չափով կամ 8.2%-ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են 1526065.5 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 12.9%-ը և ընդհանուր եկամուտների 8.7%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 62715.5 հազ. դրամով կամ 4.3%-ով: 2010-ի 9 ամիսների համեմատ եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 11.3%-ով կամ 155289 հազ. դրամով:

Շահութահարկի գծով պետական բյուջեի եկամուտները 9 ամիսներին կազմել են 1326953.5 հազ. դրամ՝ ապահովելով





հարկային եկամուտների 11.2%-ը և ընդհանուր եկամուտների 7.6%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 1%-ով կամ 13603.5 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն ավելացել են 193115.2 հազ. դրամով կամ 17%-ով:

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի հաշվին ապահովվել են 206123.2 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 1.7%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 1.2%-ը: Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 17073.2 հազ. դրամով կամ 9%-ով, իսկ նախորդ տարվա մակարդակը՝ 33.9%-ով կամ 52195.8 հազ. դրամով:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 339544.4 հազ. դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 2.9%-ը. պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 9.1%-ով կամ 28214.4 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերը նվազել են 44702.3 հազ. դրամով կամ 11.6%-ով:

2011 թվականի 9 ամսվա ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 9.5%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 6.4%-ը ապահովվել են առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 1126128.2 հազ. դրամ՝ 15.8%-ով կամ 153776.7 հազ. դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, իսկ 11.1%-ով կամ 112778.2 հազ. դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի նախատեսված ցուցանիշը:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով 2011 թվականի 9

ամսվա կտրվածքով պետական բյուջե է մուտքագրվել 459586.4 հազ. դրամ, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 1.9%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վճարի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 103427.4 հազ. դրամի չափով, կամ 29%-ով:

2011 թվականի 9 ամիսների՝ ԼՂՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են շուրջ 11842856.7 հազ. դրամ՝ ծրագրային մուտքերից 2.8%-ով ավելի: 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 1248303.2 հազ. դրամով կամ 11.8%-ով: Հարկային եկամուտների հաշվին ապահովվել է պետական բյուջեի եկամուտների 67.6%-ը: Գերակատարվել են պետական բյուջեի հարկային եկամուտների բոլոր եկամտատեսակների պլանային առաջադրանքները



Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար

կատարվող մասհանումների մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 401422.5 հազ. դրամ, նախատեսված ցուցանիշը գերազանցվել է 23282.5 հազ. դրամով կամ 6.2%-ով: Նախորդ տարվա 9 ամսվա համեմատ մասհանումների գծով մուտքերը աճել են 11%-ով կամ 39756.8 հազ. դրամով:

Հարկային այլ եկամուտների գծով այս տարվա 9 ամիսների մուտքերը կազմել են 56157.2 հազ. դրամ, որը ծրագրված ցուցանիշը գերազանցել է 2734.8 հազ. դրամով կամ 5.1%-ով: Նախորդ տարվա

համեմատ այլ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 18.4 %-ով կամ 12677.9 հազ. դրամով:

Ռոյալթիի գծով 2011 թվականի 9 ամսվա պետական բյուջեի եկամուտները կազմել են 263192.8 հազ. դրամ. նախատեսվածը կատարվել է 104.4%-ով կամ ավելի է 11200.8 հազ. դրամով: Նախորդ տարվա համեմատ ռոյալթիի գծով մուտքերը աճել են 107.5%-ով:


Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները 2011 թվականի 9 ամսում կազմել են 46253.4 հազ. դրամ կամ ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 0.5%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով մուտքերը աճել են 29.9%-ով:

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐԵ

Պետական տուրքի գծով 2011 թվականի 9 ամսվա բյուջեի մուտքերը կազմել են 279401.9 հազ. դրամ՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 1.6 %-ը: Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 12401.9 հազ. դրամով, կամ 4.6 %-ով: 2010թ. 9 ամսվա համեմատ պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 9.4 %-ով կամ 24038.5 հազ. դրամով:

ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի 2011 թվականի 9 ամսվա մուտքերը կազմել են 4657110 հազ. դրամ(հաշվի առնելով նաև ծախսերի չափը՝ 364929.7 հազ. դրամ) կամ պլանավորված ցուցանիշը կատարվել է 103.9%-ով ավելի է 174410 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վճարի գծով մուտքերը աճել են 9.5%-ով կամ 405332.9 հազ. դրամով:



1998 թվականից գործող Ասկերանի շրջանի հարկային տեսչությունում տարիների ընթացքում ձևավորվել են ավանդույթներ, ստեղծվել է թիմ: Առանձնահատուկ ձեռքբերումն այն է, որ այսօր 9 հոգանոց այդ թիմն ունի կին ղեկավար: Նա՝ Էլենուրա Բաբայանը, Ասկերանի շրջանի հարկային տեսչության ղեկավարի պաշտոնում նշանակվել է 2009 թվականին, սակայն հարկային համակարգում նրա աշխատանքային կենսագրությունը սկսվել է կառույցի ստեղծման օրվանից: Նա աշխատել է Մարտունու, ապա՝ Մարտակերտի շրջանային հարկային տեսչություններում:



«Կին լինելը չի խանգարում աշխատանքները կազմակերպելուն, աշխատակիցների և հարկատուների հետ շփումներին»

«ՏԱՆ» ԳԼՈՒԽԸ ԿԻՆ Է

Ասկերանի շրջանի հարկային տեսչությունը արդյունավետ է գործում կանաչի ձեռքի տակ

-Տիկին Բաբայան, Դուք հարկային տեսչության միակ կին պետն եք: Յե՞շտ է այդ պաշտոնը վարելը:

-Կարծում եմ՝ կին լինելը չի խանգարում աշխատանքները կազմակերպելուն, աշխատակիցների և հարկատուների հետ շփումներին: Լավ ղեկավարի գլխավոր հատկանիշներն են ուժեղ բնավորությունը, պատասխանատվության մեծ զգացումը և կոլեկտիվին համախմբելու ունակությունը:

Կարևոր պայման է, որ ղեկավարը ճիշտ կարողանա կազմակերպել շփումները յուրաքանչյուրի հետ. եթե անհրաժեշտ է, կիրառի համոզելու, բացատրելու սկզբունքը, երբեմն նաև դիմի կոշտ մեթոդների: Ես շատ եմ սիրում իմ աշխատանքը և մշտապես ձգտում եմ կատարելագործվելու:

-Աշխատանքների արդյունավետ կատարման կարևոր չափանիշներից մեկը

պետքայուջեի հարկային եկամուտների հավաքագրման մակարդակն է: Ի՞նչ արդյունքներ կան 2011-ի հունվար-սեպտեմբեր ամիսների կտրվածքով:

-Այս տարվա առաջին ինն ամիսների համար նախատեսված հարկային եկամուտները 174 մլն 245 հազար դրամ են: Հավաքագրվել է 189 մլն 577 հազար դրամ՝ նախատեսվածը կատարելով գրեթե 109 % և 16,2 %-ով գերազան-

ցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Ընդ որում, ծրագրված ցուցանիշները գերակատարվել են բոլոր ուղղություններով: Պետական տուրքի գծով մուտքերն ապահովել ենք մոտ 122 տոկոսով, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 104,8%-ով: Այդ ամենի արդյունքում՝ հարկային եկամուտների, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մուտքերն ապահովել ենք մոտ 107 %-ով:

-Ասկերանում տիրող ընդհանուր տնտեսական աշխուժությունը թույլ էր տալիս ենթադրելու, որ հարկային եկամուտներն ավելի մեծ են լինելու այս անգամ: Ըստ Ձեզ, ինչո՞ւ սպասելիքները այդքան էլ չարդարացան:

-Իսկապես, շրջանում տարեցտարի ավելի է աշխուժանում տնտեսությունը: Սակայն, մայրաքաղաքին մոտ լինելու հանգամանքով պայմանավորված, շրջանի բնակիչներից շատերը գնումներ են կատարում մայրաքաղաքում: Մի մասը Ստեփանակերտում է աշխատում, մյուսներն այնտեղ գնում են՝ արտադրած գյուղատնտեսական մթերքները իրացնելու նպատակով և վերադառնում՝ անհրաժեշտ ապրանքները գնած: Սա անկարևոր հանգամանք է թվում, բայց իրականում բավական մեծ ազդեցություն է ունենում բուն Ասկերանի շրջանում իրականացվող առևտրի ծավալների վրա: Բնականաբար, եթե այդ ծավալները փոքր են, փոքր է նաև հավաքագրված առևտրի հարկի չափը: Այսօրվա դրությամբ մեր տեսչությունում հաշվառված 729 հարկատու ունենք, այս պահին գործում են 348-ը: Նրանցից 238-ը անհատ ձեռնարկատերեր են: Գործող սուբյեկտների 51 տոկոսն աշխատում է առևտրի, 16 տոկոսը՝ սպասարկման, 8 տոկոսը՝ ապրանքների արտադրության և 4 տոկոսը՝ շինարարության բնագավառում:

-Տիկին Բաբայան, աշխատելով տարբեր շրջանների հարկային տեսչություններում ի՞նչ եք նկատում, հե՞շտ է Ասկերանի շրջանի հարկ վճարողների հետ աշխատելը:



Այս տարվա առաջին ինն ամիսների համար նախատեսված հարկային եկամուտները 174 մլն 245 հազար դրամ են: Հավաքագրվել է 189 մլն 577 հազար դրամ՝ նախատեսվածը կատարելով գրեթե 109 % և 16,2 %-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Ընդ որում, ծրագրված ցուցանիշները գերակատարվել են բոլոր ուղղություններով

-Հարկատուների հետ աշխատանքում կարևորը ճիշտ մոտեցումն է: Երբ նշանակվել եմ Ասկերանի շրջանի հարկային տեսչության ղեկավար, ըստ ոլորտների՝ հանդիպումներ և առանձնագրույցներ եմ ունեցել շրջանի բոլոր հարկ վճարողների հետ անխտիր, քանի որ մոտեցումները պետք է հստակեցնեինք հենց սկզբից: Մեր խնդիրը չէ ամեն գնով խախտումներ գտնելն ու դրանց համար տուգանքներ հաշվարկելը: Ավելի մեծ ուշադրություն ենք դարձնում կանխարգելիչ միջոցառումներին: Տարվա ընթացքում բազմաթիվ հանդիպումներ ենք ունենում հարկատուների հետ, պարզաբանումներ, բացատրություններ տալիս ոլորտում կատարված փոփոխությունների վերաբերյալ: Միայն դրանից հետո՝ անհրաժեշտության դեպքում, անպարտաճանաչ հարկ վճարողների նկատմամբ կիրառվում են վարչական լծակներ:

-Այդ աշխատանքների համար գործի գիտակ մասնագետներից կազմված թիմ է անհրաժեշտ: Ասկերանի հարկային տեսչությունն ունի՞ նման թիմ:

-Բանիմաց մասնագետներից ձևավորված թիմը տեսչության գլխավոր ձեռքբերումն է: Վստահ եմ՝ այսօր արդեն ունենք նման թիմ: Տեսչությունն այս պահին 9 աշխատակից ունի: Մեր մասնագետները կարողացել են գործով ապացուցել իրենց հնարավորությունները, իսկ ծառայության կենտրոնական մարմնի կողմից պարբերաբար կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման կուրսերը արդյունավետորեն նպաստում են նրանց մասնագիտական գիտելիքների բարձրացմանը: Մյուս կողմից, որքան էլ զարմանալի հնչի, լավ մասնագետներ են անհրաժեշտ և՛ հարկային պետական ծառայությունում, և՛ գործարար միջավայրում: Մեր պարագայում կարևորվում է հատկապես բարձրակարգ հաշվապահների առկայությունը: Վստահ ենք՝ այդ դեպքում հարկային ծառայությանը ներկայացվող հաշվետվություններում նվազագույնի կհասնեն սխալները, հեշտ կլինի ներկայացնել ոլորտում կատարվող փոփոխությունները: 

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Հունվար

I	II	III	IV	V	VI	VII
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23 30	24 31	25	26	27	28	29

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

*ԼՂՀ հարկային պետական ծառայության
պետ Արտակ Բալայան.*

*«Անցած տարիները հարկային պետական ծա-
ռայության համար, ինչպես ողջ ԼՂՀ-ի համար,
կայացման ու ամրապնդման տարիներ էին:
Այժմ կարող ենք վստահ ասել՝ ժամանակն
արդյունավետ է օգտագործվել. բավական է
հիշել, թե ինչից ենք սկսել և ուր ենք հասել»*





Պատերազմի միջով անցնող երկրի համար զարգացած հարկային համակարգ կանխատեսելը 20 տարի առաջ անհնար էր: Այսօր Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում այդ համակարգը կա: Անկախ հռչակված ԼՂՀ-ի նման այն ևս անցել է բազմաթիվ փորձությունների միջով, հաղթա-

հարել արգելքներ և կայացել: Հարկային պետական ծառայության անցած ուղու, ձեռքբերումների, խնդիրների, նաև հետագա ծրագրերի մասին «Հարկատուն» զրուցել է հարկային պետական ծառայության պետ, հարկային ծառայության առաջին դասի պետական խորհրդական Արտակ Բալայանի հետ:

ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20 ՏԱՐԻՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Ժամանակն արդյունավետ է օգտագործվել

-Պարոն Բալայան, ԼՂՀ 20-ամյակը, ընդհանուր ձեռքբերումներից բացի, առանձին կառույցների հաջողությունների մասին խոսելու հիանալի առիթ է: Ի՞նչով են նշանավորվել անկախության տարիները հարկային պետական ծառայության համար:

-Հարկային պետական ծառայությունն իր կենսագրությունն անհամեմատ ուշ՝ 1998 թվականից է սկսել՝ վարչության կարգավիճակով: Կառավարության առընթեր ծառայության կարգավիճակ կառույցը 2004-ին է ստացել: Անցած տարիները հարկային պետական ծառայության համար, ինչպես ողջ ԼՂՀ-ի համար, կայացման ու ամրապնդման տարիներ էին: Այժմ կարող ենք վստահ ասել՝ ժամանակն արդյունավետ է օգտագործվել. բավական է հիշել, թե ինչից ենք սկսել և ուր ենք հասել: Այսօր ունենք կայացած համակարգ՝ համալրված պատրաստված մասնագետներով: Լուրջ ուշադրություն ենք դարձնում իրականացվող աշխատանքների և հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանը: Այսօր ծառայության ստորաբաժանումներում հարկ վճարողներին սպասարկում են ավելի հարմարավետ պայմաններում, հաշվետվությունները հանձնելիս հազվադեպ են առաջանում հերթեր, կուտակումներ: Ձեռքբերումները նկատելի են, բայց եղածով չենք բավարարվելու: Նախատեսում ենք առաջիկայում անցնել հար-

կային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ընդունելու և մշակելու գործընթացին: Անցումը՝ էլեկտրոնային կառավարման համակարգին, հարկ վճարողներին թույլ կտա միջոցներ և ժամանակ տնտեսել: Մյուս կողմից, դա նկատելիորեն կբարձրացնի հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը, հնարավորություն կտա իրականացնելու առավել որակյալ վերլուծություններ և դրանցից բխող հասցեական ստուգումներ, ինչը կապահովի հարկային եկամուտների կայուն մակարդակ:

-Տեխնիկական զինվածությունը և մասնագիտական ներուժը ինչպիսի՞ն են ծառայության ստեղծումից տարիներ անց:

-Ժամանակի ընթացքում տեխնիկական հնարավորություններն ընդլայնվել են՝ առավել ճկուն և օպերատիվ դարձնելով համակարգի աշխատանքը: Ընդ որում, տարիների հետ այդ գործընթացը միայն արագանում և ավելի մեծ ծավալներ է ստանում: Եթե մի քանի տարի առաջ ողջ կառույցի ունեցած համակարգիչները մատների վրա կարելի էր հաշվել (ես դեռ չեմ խոսում որակի մասին), ապա այսօր գրեթե յուրաքանչյուր հարկային ծառայող աշխատանքն իրականացնում է առանձին համակարգչով: 2008 թվականից ծառայության բոլոր ստորաբաժանումները միացված են

միասնական ցանցով, որը զգալի առավելություններ և նոր հնարավորություններ է ստեղծում:

Տեխնիկական միջոցներից և շենքային պայմաններից բացի կարևոր է մասնագիտական ներուժը: Այդ պատճառով կադրերի պատրաստվածության մակարդակը մշտապես մեր ուշադրության կենտրոնում է: Պարբերաբար աշխատակիցներին ներգրավում ենք վերապատրաստման դասընթացներում: Աշխատակիցները հնարավորություն ունեն նաև իրենց մասնագիտական

Մաղթում եմ, որ հանրապետության քաղաքացիները հարկերը վճարելը դիտեն ոչ թե որպես պարտականություն, այլ մեր երկրի կառուցմանը մասնակցելու իրավունք և հնարավորություն: Այդ դեպքում կարող ենք վստահ լինել, որ ևս 20 տարի հետո կունենանք ավելի հզոր և զարգացած պետություն

հմտությունները զարգացնելու Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում: Այսօր հասել ենք նրան, որ աշխատում ենք հարկային ծառայողի ոչ միայն աշխատանքային ունակությունները, այլև վարքագծի կանոնները ամբողջացնելու ուղղությամբ: Համակարգի արդիականացմանը և մասնագետների կատարելագործմանն ուղղված ծրագրերը շարունակական են լինելու:



Տեխնիկական միջոցներից և շենքային պայմաններից բացի կարևոր է մասնագիտական ներուժը: Այդ պատճառով կադրերի պատրաստվածության մակարդակը մշտապես մեր ուշադրության կենտրոնում է: Պարբերաբար աշխատակիցներին ներգրավում ենք վերապատրաստման դասընթացներում: Աշխատակիցները հնարավորություն ունեն նաև իրենց մասնագիտական հմտությունները զարգացնելու Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում: Այսօր հասել ենք նրան, որ աշխատում ենք հարկային ծառայողի ոչ միայն աշխատանքային ունակությունները, այլև վարքագծի կանոնները ամբողջացնելու ուղղությամբ: Համակարգի արդիականացմանը և մասնագետների կատարելագործմանն ուղղված ծրագրերը շարունակական են լինելու:

-Ինչո՞վ են պայմանավորված հասարակության տարբեր հատվածների հակասական գնահատականները՝ կառույցի աշխատանքների վերաբերյալ:

-Կողքից ամեն ինչ ավելի հեշտ է թվում: Սակայն եթե իրավիճակը գնահատում ենք ավելի սթափ, ապա տեսնում ենք, որ հարկային մարմինն հասցեագրված հիմնական քննադատությունները հնչեցվում են այն մարդկանց կողմից, ովքեր անձնավորված մոտեցում են ցուցաբերում մեր աշխատանքներին, կամ էլ՝ պոպուլիստական նկատառումներից ելնելով՝ հույս ունենալով կողմնակիցներ գտնել այն մարդկանց շարքում, ում մասին քիչ առաջ ասացի: Իսկ հիմնականում հարկատուներն այսօր ըմբռնումով են մոտենում մեր աշխատանքներին: Այդ են փաստում նաև հարցում-

ների արդյունքները, որոնք անցկացվում են պարբերաբար, ընդ որում՝ անկախ մասնագետների կողմից: Նույն տպավորությունն եմ ստանում նաև գործարարների հետ ունեցած հանդիպումների ժամանակ: Եվ դա այն դեպքում, երբ մի քանի տարի առաջ Նույնպիսի հանդիպումներում հաճախ եմ դժգոհություններ լսել: Այսօր բողոքների կրճատումը հարկային մարմնի կողմից ձեռնարկված միջոցների տրամաբանությունից է բխում: Դժգոհություն չի կարող լինել, քանի որ մեր առաջին քայլերից մեկը եղել է տույժերի նվազեցումն ու տարբերակված համակարգի ներդրումը, որի համաձայն՝ հարկի վճարումը մինչև 90 օր ուշացնելու դեպքում յուրաքանչյուր ուշացված օրվա համար սահմանվել է 0.075% տույժ, իսկ 91 օրից ավելի ուշացնելու դեպքում՝ 0.1% չափով՝

նախկինում գործող 0.15% միասնական դրույքաչափի փոխարեն: Տարեցտարի կրճատվում է ստուգումների թիվը. եթե 2008-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին իրականացվել է 935 ստուգում, 2009-ին՝ 627, ապա՝ 2010-ի և 2011-ի նույն ժամանակահատվածում համապատասխանաբար՝ 544 և 350 ստուգում: 2009-ի հուլիսի 1-ից մեկնարկել է կամերալ(գրասենյակային) ուսումնասիրությունների գործընթացը: Հարկային մարմնի կողմից տարեկան կտրվածքով ավելի քան 4000 հաշվարկ-հաշվետվություններ են ներկայացվում կամերալ ուսումնասիրությունների, որոնք ուղղված են հարկ վճարողների կողմից ներկայացված հաշվետվություններում տեղ գտած սխալների վերհանմանն ու հարկ վճարողների իրազեկմանը՝ գերծպահելու համար հետազայում իրականացվող ստուգումների արդյունքում կիրառվելիք պատասխանատվությունից: Դա նաև հնարավորություն է ընձեռնում՝ վերհանելու առավել ռիսկային հարկ վճարողներին:

-Տարիների հետ ծառայության առաջնահերթությունները փոխվո՞ւմ են:

-Հարկային պետական ծառայության առաջնահերթությունները միշտ էլ անփոփոխ են, պարզապես որոշակի ժամանակահատվածում, ըստ անհրաժեշտության, սկսում է գերակշռել դրանցից որևէ մեկը: Մենք փորձում ենք առանց միջամտելու վերահսկել արտադրությունից կամ ներմուծումից մինչև իրացում ողջ շղթան՝ ձգտելով դրա բոլոր օղակներում պայքարել ստվերի դեմ: Դրան են ուղղված նաև իրականացվող ստուգումները: Ժամանակի հետ այդ քաղաքականությանն ուղղված գործիքներն են կատարելագործվում: Մշակվում են մեխանիզմներ՝ ռիսկային չափանիշների հիման վրա ստուգումների կազմակերպման նպատակով. 2012-ի հունվարից նախատեսվում է դրանց փորձական կիրառումը: Այս ամենի արդյունքում, բնականաբար, ստուգումների թիվը կշարունակի նվազել, իսկ հարկային ծառայողների այցերը կդառնան առավել հասցեական: Այդ միտումն այսօր



արդեն կա: Սրանք ձեռքբերումներ են, որոնք ժամանակին անհնար էին թվում:

-Պարոն Բալայան, հարկային մարմին-հարկատու փոխհարաբերություններում կառուցողական երկխոսություն և փոխ-գործակցություն ձևավորվե՞լ է տարիներ-ի ընթացքում:

-Զգալիորեն ամրապնդվել է հարկային մարմնի և հարկ վճարողների միջև կա-պը: Համապատասխան ստորաբաժա-նումները օպերատիվ արձագանքում են մեզ ուղղված բոլոր գրություններին, բողոքներին և մանրամասն պարզա-բանում տալիս: Բացի այդ, հարկային ոլորտին առնչվող ցանկացած օրենսդ-րական, նորմատիվ ակտերի փոփոխու-թյունների վերաբերյալ սեմինար-խորհր-դակցություններ են անցկացվում մայրա-քաղաքում և շրջկենտրոններում: Ամենա-կարևորն այն է, որ մեր աշխատանքում բացառվում են երկակի չափանիշները, մենք բաց ենք բոլոր քննարկումների համար: Եթե կա որևէ խնդիր, ապա նա, ով իրապես մտահոգված է իր պետությ-ան բարգավաճմամբ, կարող է բարձրա-ձայնել այդ մասին՝ օգտագործելով մեր կայքէջը և գրություն ուղարկելով կամ ընդունելության գալով ինձ մոտ: Սա ես համարում եմ առողջ մոտեցում և վստա-հեցում՝ արձագանքը չի ուշանա: Հար-կային մարմին-հարկ վճարող կապերի ամրապնդումը և դրանց արդյունավե-տության բարձրացումը շարունակելու են մնալ մեր օրակարգում: Հանրային իրազեկման աշխատանքները կանոնա-կարգված իրականացնելու նպատակով արդեն հաստատվել է ծրագիր, որը ներ-կայացնում է հանրային իրազեկմանն ուղղված հարկային պետական ծառա-յության այս տարվա միասնական ռազ-մավարությունը և հիմք է լինելու այդ ուղ-ղությամբ իրականացվելիք քաղաքակա-նության հաջորդ փուլերի համար:

-Ինչպիսի՞ նվաճումներ կան հասարա-կության հետ կապերի ոլորտում:

-Մենք ձգտում ենք ծառայության աշխա-տանքները տեսանելի և հասկանալի դարձնել բոլորի համար, անգամ եթե նրանց մի մասը ձեռնարկատիրությամբ չի զբաղվում, բնականաբար՝ հարկեր չի

վճարում և հարկային մարմնի հետ ուղ-ղակի առնչություն չունի: Հավատա-ց-նում եմ՝ շատերն են հետաքրքրված հարկային ծառայության աշխատանք-ներով: Դրա լավագույն ապացույցը մեր պաշտոնական կայքի այցելուների վիճակագրությունն է: Սեպտեմբերի 30-ի դրությամբ մենք արդեն 130 հազարից ավելի այցելու ենք ունեցել: Վստահ եմ, որ նրանցից ոչ բոլորն են ձեռնարկատի-րությամբ զբաղվում: Փաստը, որ պար-բերաբար հազարավոր քաղաքացիներ են օգտվում մեր կայքի ծառայությու-ններից, վկայում է, որ մենք հասել ենք նպատակին: Նորարարություններին զուգահեռ հավատարիմ ենք մնում նաև տեղեկատվության տարածման ավան-դական՝ տպագիր տարբերակին՝ ետ չմնալով ժամանակի պահանջներից: Մասնավորապես՝ «Հարկատու» ամ-սագիրը շահեկանորեն առանձնանում է իր թե՛ ձևավորմամբ և թե՛ բովանդա-կությամբ: Դրա էջերում հարկային հա-

մակարգի մասնագետների, անկախ փորձագետների միջոցով պարբերա-բար հանրությանն են ներկայացվում հարկային համակարգի օրենսդրական, կառուցվածքային, վարչարարական նորությունները, գործարարների հաջո-ղությունները, անգամ՝ ձախողված փոր-ձերը: Առաջիկայում նախատեսվում ենք նաև ամսագիրը համալրել երկրի տնտե-սական զարգացումներին վերաբերող նյութերով և մի շարք օգտակար տեղե-կատվությամբ:

-Պարոն Բալայան, ի՞նչ բարեմադրանք կհղեք ԼՂՀ 20-ամյակի առթիվ:

-Մաղթում եմ, որ հանրապետության քա-ղաքացիները հարկերը վճարելը դիտեն ոչ թե որպես պարտականություն, այլ մեր երկրի կառուցմանը մասնակցելու իրավունք և հնարավորություն: Այդ դեպ-քում կարող ենք վստահ լինել, որ ևս 20 տարի հետո կունենանք ավելի հզոր և զարգացած պետություն: 



Լուրջ ուշադրություն ենք դարձնում իրականացվող աշխատանքների և հարկ վճարող-ների սպասարկման որակի բարձրացմանը: Այսօր ծառայության ստորաբաժանում-ներում հարկ վճարողներին սպասարկում են ավելի հարմարավետ պայմաններում, հաշվետվությունները հանձնելիս հազվադեպ են առաջանում հերթեր, կուտակումներ: Ձեռքբերումները նկատելի են, բայց եղածով չենք բավարարվելու: Նախատեսվում ենք առաջիկայում անցնել հարկային հաշվետվությունների՝ էլեկտրոնային եղանակով ըն-դունելու և մշակելու գործընթացին: Անցումը՝ էլեկտրոնային կառավարման համակար-գին, հարկ վճարողներին թույլ կտա միջոցներ և ժամանակ տնտեսել

ԼՂՀ 100 ԽՈՇՈՐ ԶԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ ՄՈՒԾԵԼ ԵՆ 10484.2 ՄԼՆ ԴՐԱՄ



2011 թվականի 9 ամիսների ընթացքում ԼՂՀ 100 խոշոր հարկատուները պետական բյուջե են մուծել 10484.2 մլն դրամ ընդհանուր գումարով հարկեր, տուրքեր և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ: Դա ԼՂՀ պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների ընդհանուր մուտքերի 62.6 %-ն է: Նկատենք, որ 2010-ի նույն ժամանակահատվածում 100 խոշոր հարկատուների վճարած հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) ընդհանուր գումարը կազմել է շուրջ 8861.2 մլն դրամ, այսինքն՝ ընդհանուր մուտքերի 58.9 %-ը:



ԱՌԱՋԱՏԱՐՆ ԱՆՓՈՓՈՒՆ Է՝ «ԲԵՅՁ ՄԵԹՃԼՍ»

100 խոշորների ցանկը, ինչպես 2010-ին, այնպես էլ այս տարվա 9 ամիսների ընթացքում գլխավորում է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն: Ընկերությունը նախորդ տարի վճարել էր ավելի քան 2835 մլն, այս տարի՝ շուրջ 3491 մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ): Բոլոր ցուցանիշները վկայում են, որ թիվ մեկ հարկատուին հաջողվել է հերթական անգամ լավ արդյունք արձանագրել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Առաջին եռյակում «Բեյզ Մեթըլսին» հաջորդում են «Ղարաբաղ Տեկեոմը» և «Արցախագազ» ՓԲԸ-ն: Երեք խոշոր հարկ վճարողների կողմից այս տարվա 9 ամսում ԼՂՀ պետբյուջե են փոխանցվել շուրջ 5333 մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ), այսինքն՝ պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների մոտ 32 %-ն ապահովել են 3 խոշորները: 2010 թվականի 9 ամսվա արդյունքներով այդ ցուցանիշը կազմել է շուրջ 4455 մլն դրամ կամ պետբյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գրեթե 30 %-ը:

Ընդհանուր առմամբ, ըստ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարված, պետական բյուջե հաշվարկված և վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) ցուցանիշի մեծության՝ նկատվել է աճի միտում: Եթե հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2010-ի 9 ամսում կազմել էր շուրջ 9346 մլն դրամ, ապա 2011-ի նույն ժամանակահատվածում՝ գրեթե 10636 մլն դրամ: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցու-

ցանիշն այս տարվա 9 ամսում 2010-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1623 մլն դրամով կամ ավելի քան 18 %-ով՝ կազմելով գրեթե 10484 մլն դրամ:



100 խոշորների ցանկը, ինչպես 2010-ին, այնպես էլ այս տարվա 9 ամիսների ընթացքում գլխավորում է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն: Ընկերությունը նախորդ տարի վճարել էր ավելի քան 2835 մլն, այս տարի՝ շուրջ 3491 մլն դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ): Բոլոր ցուցանիշները վկայում են, որ թիվ մեկ հարկատուին հաջողվել է հերթական անգամ լավ արդյունք արձանագրել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ

100 խոշոր հարկատուների տարեկան վճարած հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների(այդ թվում՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների) տեսակարար կշիռը 2010-ին կազմել է ընդհանուրի մոտ 60 %-ը, 2011-ի 9 ամսում՝ 63%-ը:

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹԻՎՆ ՈՒ ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ ԱՃԵԼ ԵՆ

Նախորդ տարվա համեմատ այս տարվա 9 ամիսների ընթացքում աճի միտում է նկատվել նաև 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարված աշխատողների միջին ամսական ցուցակային թվի և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշների մասով: Աշխատողների ամսական միջին թիվը 2010-ին 8942 էր, այս տարի՝ 9062, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ամսական ցուցանիշը 2010 և 2011 թվականների 9 ամիսների կտրվածքով համապատասխանաբար կազմել է մոտ 952 մլն և ավելի քան 1061 մլն դրամ: Ամսական միջին աշխատավարձը 2010-ի 9 ամսում ավելի քան 106 հազար դրամ էր, իսկ այս տարի ավելի քան 117 հազար: Առաջին 3 խոշոր հարկ վճարողների մասով աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2011թ.-ի 9 ամսում 2010-ի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է ավելի քան 48 մլն դրամով՝ կազմելով գրեթե 385 մլն դրամ:

ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐՆ՝ ԸՍՏ ԻՐԵՆՑ ԻՐԱՑՄԱՆ ԾԱՎԱԼԻ

2011 թվականի 9 ամսում, ըստ ծավալի, 100 խոշոր հարկ վճարողների ցուցանիշների պատկերը հետևյալն է. եթե հարկ վճարողների կողմից հայտարարված իրացման ծավալի ցուցանիշը(առանց ԱԱՀ-ի) անցած տարվա 9 ամսում գրեթե 72968 մլն դրամ էր, ապա 2011-ի նույն ժամանակահատվածում այն կազմել է 88260 մլն դրամ: Իսկ դա նշանակում է, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրացման ծավալի աճ է արձանագրվել ավելի քան 15292 մլն դրամով կամ 21%-ով:

ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ/Հ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի մտնվելու վայրը	2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատագրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
1.	90016169	«Բեյզ Մեթըլ» ՓԲԸ	գ. Դրմբոն	3185322.0	736000.0	1666000.0		783322.0
2.	90015278	«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	1060880.7	165921.0	856462.4		38497.3
3.	90010189	«Արցախգազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	545384.0	16383.8	505028.7		23971.5
4.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	427472.7	42094.4	350334.0		35044.3
5.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	301189.5	279700.3	1116.5		20372.7
6.	90012365	«Զարավան» ՍՊԸ	գ. Բերքաձոր	185811.0	19436.4	150625.5		15749.1
7.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	151989.5	34857.7	112511.5	15.0	4605.3
8.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	151683.5	38722.7	106812.9		6147.9
9.	90071281	«Դոմոմիկ» ՍՊԸ	գ. Այգեստան	151650.8	9000.0	132025.8		10625.0
10.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	150903.4	9071.7	136732.5		5099.2
11.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	101967.1	4148.7	28121.4	60100.4	9596.6
12.	90070057	«Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	100142.4	7292.8	87340.2	185.7	5323.7
13.	90025315	«Արցախ ՋԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	88632.4	77285.7	1233.3		10113.4
14.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	88498.3	18617.1	66199.2		3382.0
15.	90213015	«Ավանգարդ» ՍՊԸ	ք. Մարտունի	67190.7	8486.8	5576.6	4227.6	48899.7
16.	90003056	«Մեյտա» ԱԿ	ք. Ստեփանակերտ	59191.6	3658.0	40349.3	560.8	14623.5
17.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	55609.3	4161.6	50226.3		1221.4
18.	90024957	«Շին-Վեր պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	54375.7	6224.8	45180.5		2970.4
19.	90026446	«Գլոբալշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	52748.4	10875.7	39740.2		2132.5
20.	90027001	«Արցախուդի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	51855.0	9035.0	41380.0		1440.0
21.	90016787	«Սիզմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	51810.1	5489.5	44612.3		1708.3
22.	90025307	«Սուր Նարեկ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	51473.1	6269.4	43672.3		1531.4
23.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	48269.3	2337.4			45931.9
24.	90213737	«Պրոմագրոսերվիս» ՓԲԸ	ք. Մարտունի	46554.6	1418.1	43935.2		1201.3
25.	90000324	ԼՂՀ Ոստիկանության պետական պահպանության վարչություն	ք. Ստեփանակերտ	40290.5	538.7	38925.5		826.3
26.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ. Բերքաձոր	39956.3	4289.7	33036.2		2630.4
27.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոնկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	39785.2	5652.0	33408.6		724.6
28.	90025659	«Ատրիում» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	37738.7	6479.2	28910.4		2349.1
29.	90013565	«Աշոցք» ՍՊԸ	ք. Ասկերան	35914.2	8461.8	26200.5		1251.9
30.	90018172	«Կապիտալ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	35847.2	893.1			34954.1
31.	90027079	«Պրիմա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	35444.5	205.2		238.6	35000.7
32.	90003261	«Խաչեն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	35352.2	7526.5	26290.9		1534.8
33.	90001705	«Օկեան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	34821.7	1096.1			33725.6
34.	90019907	«Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	33164.8	6620.2	24236.1		2308.5
35.	90016752	«Ճանշին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	33161.9	4785.0	26170.0		2206.9
36.	90026928	«Տեխմոնտաժ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	31958.7	6669.6	24528.4		760.7
37.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	31024.4	6147.4	22874.5		2002.5
38.	90281903	«Պարզև» ՍՊԸ	ք. Հադրութ	30626.3	1285.8	11117.7		18222.8
39.	90003099	«SBS» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	29925.5	1458.8			28466.7
40.	90005027	«Զրմուղ-Կոյուդի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	29298.5	6500.0	21240.0		1558.5
41.	90027209	«Ադրիանա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	29264.9	3599.4	24947.0		718.5
42.	90029873	«Միկմետալ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	28606.3	606.9	13055.0		14944.4
43.	90282605	«Հաբանդ» ՍՊԸ	գ. Տոլ	28587.3	12495.1	14872.6		1219.6
44.	90026025	«Երեքնուկ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	27978.1	1078.1	2665.1		24234.9
45.	90012064	«Բարի Յոգի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	27921.3	1388.6			26532.7
46.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	27429.4	12456.3	11802.3		3170.8
47.	90012812	«Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	27285.1	8173.1	462.0	12600.0	6050.0
48.	90013187	«Ճանշինվերանորոգում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	25857.2	3296.3	21013.1		1547.8
49.	90013333	«Արցախերկսեմետ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	25619.8	22626.7	436.6		2556.5
50.	90070118	«Վահագն-84» ԱԿ	ք. Ասկերան	25296.7	1147.6	23026.8	186.4	935.9



ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒՅՈՒՆՆԵՐԸ

Հ/Հ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի մտնվելու վայրը	2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ. դրամ)				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատա-մնքրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
51.	90018886	«Գնատ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	23319.4	480.0			22839.4
52.	90022299	«Հրայր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	22850.0				22850.0
53.	90024733	«Հայթիզնեսթանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	21727.4	14502.2	1219		6006.2
54.	90003072	«Նվեր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	21643.6	3871.0	15009.2	1836.3	927.1
55.	90023765	«Սեար գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	21636.0	648.1	1897.3		19090.6
56.	90012176	«Վարարակն» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	21609.4	4021.2	16753.8		834.4
57.	90012099	«Ֆարմսերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	21580.1	4085.4	15263.0		2231.7
58.	90013943	«Սասուն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	21471.0	1823.5	19207.0		440.5
59.	90004677	«Սիփան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	20999.2	1527.4	19004.7		467.1
60.	90070701	«Վրեժ» ՓԲԸ	գ. Այգեստան	20864.8		20264.8		600.0
61.	90017249	«Այլուս գրուպ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	20302.3	3969.9	11811.4	3861.0	660.0
62.	90414369	Բաղդասարյան Արմեն ա/ձ	ք. Ստեփանակերտ	20117.0	644.8			19472.2
63.	90019228	«Օմեգա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	19180.5	515.3	3667.5	13612.5	1385.2
64.	90282664	«Արարատշինտրանս» ՍՊԸ	գ. Այգեստան	18739.0	2521.7	15359.2		858.1
65.	90016323	«Բլարգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	18695.3	2478.3	15942.0		275.0
66.	90020535	«Աշոտ Երկաթ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	18601.0	3397.8	13040.9	628.9	1533.4
67.	90070246	«Սևան» ՍՊԸ	գ. Իվանյան	18476.2	1547.5	12259.9	2820.4	1848.4
68.	90006038	«Տրային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	18081.7	2360.0	14144.0		1577.7
69.	90019476	«Տեխնոլոգիաներ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	17804.6	2947.6	13524.3		1332.7
70.	90001559	«Նորայր եւ Հրայր եղբայրներ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	17616.5	1277			16339.5
71.	90009361	«Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	17003.4	3323.1	12521.0		1159.3
72.	90026704	«Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	16525.7	7210.6	8241.7		1073.4
73.	90018654	«Ֆլեշ-պլուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16408.2	1668.7	2528.9	5731.6	6479
74.	90018697	«Արցախ կարի-կոշիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	16399.6	10929.0	500.0		4970.6
75.	90015123	Ալ.Թախթաշյանի անվ. «Բուսաբանական այգի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	16208.8	2575.0	13289.0		344.8
76.	90010207	«Ջի Էֆ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15940.0	3821.7	11753.1		365.2
77.	90020724	«Հիմք» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15858.2	4452.4	10966.1		439.7
78.	90014541	«Դիզակ պլուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15508.9	3791.7	11197.6		519.6
79.	90021261	«Արաքս Գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	15455.9	12472.1			2983.8
80.	90016177	«Հայաստանի բիզնեսի հիմնադրամ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	15412.0	14476			936
81.	90005352	«Էներգո» ԱԿ	ք. Ստեփանակերտ	15347.5	3030.2	11825.4		491.9
82.	90001138	«Մեխտրանսպորտ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	14429.6	3319.0	10343.6		767.0
83.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	14049.9	1493.9	11972.4		583.6
84.	90028854	«Տրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	13978.3	6700.2	6698.1		580
85.	90004179	«Արմինկո-ՆԿ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	13730.7	2314.6	10723.0		693.1
86.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	13441.7	4496.7	7600.4		1344.6
87.	90025118	«Ստրոյ Սիտի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	13397.6	4720.9	8126.6		550.1
88.	90030314	«Գրանդ Զենդի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	13320.0	409.4			12910.6
89.	90002519	«Միրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	13238.3	1675.6	3336.1		8226.6
90.	90073649	«Միլան Էլ. Ջի.» ՍՊԸ	գ. Նորագյուղ	13110.0	523.9	2350.1		10236.0
91.	90014336	«Պրոգրես» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	13068.5	4388.6	8183.2		496.7
92.	90025049	«Էռմի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	12688.1	3542.7	6784.4		2361.0
93.	90029599	«Կարմիր Նուռ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	12222.1	3218.8	8675.3		328.0
94.	90073588	«Դրակապ» ՓԲԸ	ք. Ասկերան	12054.8	6873.0	4153.1		1028.7
95.	90029452	«Էյ-ի-ջի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11638.4	3952.8			7685.6
96.	90003477	«Վերածնունդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11606.8	3489.4	6275.4		1842.0
97.	90280248	«Աշոտիկ» ՍՊԸ	ք. Հաղորւթ	11430.6	2045.0	7862.8	331.6	1191.2
98.	90012322	«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11299.8	2791.6	8140.6		367.6
99.	90010282	«Արցախկաթ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11244.6	4223.6	5599.6		1421.4
100.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփանակերտի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	11148.4	1598.4	8950		600

3 մլն. դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարած առաջին 100 ապահովագիրները (առևտրային կազմակերպությունները) և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծությունները

NN ը/կ	ՀՎՀՀ	Ապահովագրի անվանումը	Ապահովագրի գտնվելու վայրը	2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին վճարված սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը (հազ.դրամ)
1	2	3	4	5
1.	90016169	«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ	գ. Դրմբոն	285000.0
2.	90015278	«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	170467.0
3.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	147041.0
4.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	97548.8
5.	90010189	«Արցախգազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	53293.7
6.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	49712.8
7.	90071281	«Դորոժնիկ» ՍՊԸ	գ. Այգեստան	34000.0
8.	90021261	«Արաքս Գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	31722.3
9.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	31630.4
10.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	31548.7
11.	90025315	«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	25747.0
12.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	25271.2
13.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	25202.3
14.	90008771	ԼՂՀ ԱՆ «Հանրապետական հիվանդանոց» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	24818.7
15.	90028854	«Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	23609.3
16.	90141847	ԼՂՀ «Ռ.Հ.Բազիլյանի անվան Մարտակերտի շրջանի բուժֆակուլտետ» ՓԲԸ	ք. Մարտակերտ	21955.6
17.	90018697	«Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	20447.0
18.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	19475.0
19.	90008979	ԼՂՀ ԱՆ «Արեւիկ» մանկական բուժֆակուլտետ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	19407.4
20.	90027001	«Արցախուղի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	19160.0
21.	90211894	ԼՂՀ ԱՆ «Մարտունու շրջանային բուժֆակուլտետ» ՓԲԸ	ք. Մարտունի	19059.9
22.	90008763	ԼՂՀ ԱՆ «Սոր եւ մանկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	18473.2
23.	90009329	ԼՂՀ ԱՆ «Արմինե Փակումեանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	17991.6
24.	90016787	«Սիզմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	17858.1
25.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	15235.8
26.	90026704	«Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	14984.3
27.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	14821.2
28.	90028907	«Տեխ Շին Ինժեներինգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	14073.6
29.	90025049	«Էռմի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	14007.2
30.	90070057	«Արցախ բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	13395.9
31.	90023094	ԼՂՀ գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ	ք. Ստեփանակերտ	12819.3
32.	90028063	«Տեխնո Ֆիտ Շին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11387.0
33.	90025262	«Արցախֆրուտ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11294.8
34.	90026446	«Գլոբալշին» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11294.8
35.	90017249	«Ալյուս գրուպ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	11271.5
36.	90003863	«Մեսրոպ Մաշտոց Համալսարան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11022.6
37.	90029452	«Էյ-ի-ջի» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10650.8
38.	90281413	ԼՂՀ ԱՆ «Հադրուրի շրջանային բուժֆակուլտետ» ՓԲԸ	ք. Հադրուր	10374.9
39.	90012812	«Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10150.0
40.	90029918	«ՖՂ-Սոֆիա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	10041.0
41.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9898.8
42.	90029969	«Ստեփանակերտի օդանավակայան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9895.5
43.	90012365	«Զարավան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	9702.0
44.	90016752	«Ճանշին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9679.6
45.	90072284	ԼՂՀ ԱՆ «Ասկերանի շրջանային բուժֆակուլտետ» ՓԲԸ	ք. Ասկերան	9637.6
46.	90028409	«Մեքենատրակտորային կայան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9430.0
47.	90010282	«Արցախկաթ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9404.3
48.	90013187	«Ճանշինվերանորոգում» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9204.1
49.	90020879	«Փերֆեքթ Սետթինգ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8448.2
50.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	8373.6



3 մլն. դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճար վճարած առաջին 100 ապահովագիրները (առևտրային կազմակերպությունները) և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների մեծությունները

NN ը/կ	ՀՎՀՀ	Ապահովագրի անվանումը	Ապահովագրի մատնվելու վայրը	2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին վճարված սոցիալական ապահովության վճարների ընդհանուր գումարը (հազ.դրամ)
1	2	3	4	5
51.	90005051	«Գրիգոր Նարեկացի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	8143.0
52.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ.Բերքաձոր	8012.9
53.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	7886.4
54.	90009361	««Արցախճան» ինստիտուտ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7810.6
55.	90025323	«Ազատ Արցախ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7630.0
56.	90020535	«Աշոտ Երկաթ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	7580.7
57.	90006038	«Զրային տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7292.0
58.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	7287.0
59.	90008832	ԼՂՀ ԱՆ «Հոգեթմրաբանական դիսպանսեր» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7263.2
60.	90003261	«Խաչեն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7179.7
61.	90019907	«Արտադրական կոմբինատ - 3» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	7025.6
62.	90025659	«Ատրիում» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	6735.2
63.	90015123	ԱԿ.Թախթաջյանի անվան «Բուսաբանական այգի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6708.5
64.	90026249	«Տոհմային կայան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	6703.8
65.	90025307	«Սուր Նարեկ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	6669.0
66.	90028183	«Հորիզոն թրեյդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	6060.4
67.	90282664	«Արարատշինտրանս» ՍՊԸ	գ.Այգեստան	5689.0
68.	90002354	«ՀԻՄԱԶԵՐ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5688.3
69.	90015235	«Արցախբանկ» ՓԲԸ «Հաղթանակ» մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	5675.2
70.	90026928	«Տեխնոնտաժ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	5673.7
71.	90009302	«Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5643.4
72.	90025118	«Ստրոյ Սիտի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5637.3
73.	90030133	«Բիոտեխնոլոգիա» ՍՊԸ		5523.0
74.	90005027	«Զրմուղ-Կայուղի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5500.0
75.	90018095	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	5484.2
76.	90003056	«Մեչտա» ԱԿ	ք. Ստեփանակերտ	5480.0
77.	90018654	«Փլեշ-պլյուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	5384.1
78.	90015243	«Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	5299.0
79.	90008952	ԼՂՀ ԱՆ «Հակապայքարախտային դիսպանսեր» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5295.5
80.	90012322	«Բնակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5030.0
81.	90015251	«Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	4957.7
82.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփանակերտի մասնաճյուղ	ք.Ստեփանակերտ	4920.0
83.	90019982	«Ավան» ՓԲԸ	ք.Շուշի	4919.3
84.	90024467	«Աիմ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4798.8
85.	90341167	ԼՂՀ ԱՆ «Շուշիի շրջանային բուժֆաբրիկում» ՓԲԸ	ք.Շուշի	4676.6
86.	90015579	ԼՂՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	4649.7
87.	90001559	«Լորայր Եւ Հրայր եղբայրներ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	4603.2
88.	90012176	«Վարարակն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4582.2
89.	90143773	«Մարտակերտի գյուղատնտեսական ծառայություններ» ՓԲԸ	ք. Մարտակերտ	4482.0
90.	90019476	«Տեխնանդերձանք» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4454.5
91.	90070118	«Վահագն-84» ԱԿ	ք. Ասկերան	4260.8
92.	90282605	«Հաբանդ» ՍՊԸ	գ.Տոլ	4260.6
93.	90073098	«Սֆինկս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4184.7
94.	90003099	«SBS» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4007.0
95.	90002836	«Էլեկտրոմոնտաժ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4000.0
96.	90023576	«Ֆոր դիրեկշնս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4000.0
97.	90070701	«Վրեժ» ՓԲԸ	գ. Այգեստան	4000.0
98.	90000298	«Զերմային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	3951.2
99.	90017206	«Կենտրոնական ավտոկայան» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3851.5
100.	90020724	«Հիմք» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3748.3



-Պարոն Բաղդասարյան, ինչպե՞ս կնկարագրեք հիմնադրամի գործունեությունը առաջին տարիներին:

-2006 թվականին հիմնադրված «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ»-ն առաջին շրջանում գլխավորապես զբաղվում էր սերմ, պարարտանյութ ներկրելով և պետական ծրագրերի շրջանակներում դրանք հողօգտագործողներին տրամադրելով: Դա արվում էր պետական միջոցներով: Իսկ «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ 2006-ին Մարտակերտում ստեղծվեց մեքենատրակտորային կայան: Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ ուղղությամբ տարվող աշխատանքներում մեզ համար շատ նորություններ կային: Այսինքն՝ ընթացքում մեզ համար հստակեցանում էին աշխատանքների կազմակերպման մանրամասները:

-Դա, կարելի է ասել, նախապատրաստական փուլն էր: Ե՞րբ և ի՞նչ ուղղություններով սկսվեցին հիմնական աշխատանքները:

-Ծավալուն աշխատանքներն սկսվել են 2008 թվականից: Ամենից առաջ հստակեցվել են գործունեության հիմնական ուղղությունները: Տարիներ շարունակ՝ մեր հողերն օգտագործվել էին, կարելի է ասել, անխնա, առանց ցանքաշրջանառության և պարարտացման: Բնականաբար, հիմնադրամի առաջին ծրագրերից մեկն ուղղված էր հողերի բերրիության բարձրացմանը: Անհրաժեշտ էր կազմակերպված աջակցություն ցուցաբերել սեփականաշնորհված հողերը մշակող սեփականատերերին՝ աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու, սերմացու, դիզվառելիք և պարարտանյութ ձեռք բերելու նպատակով:

Դա հաջողվել է ապահովել անտոկոս փոխառությունների շնորհիվ: Ուշադրությունից դուրս չեն մնացել նաև վարձակալված հողեր մշակողները. նրանց հատկացվում էին վարկային միջոցներ՝ ցածր տոկոսադրույքերով: Մյուս կողմից, կային խնդիրներ, որոնք ընդհանուր էին բոլորի՝ ինչպես սեփականաշնորհված, այնպես էլ վարձակալված հողատարածքները մշակողների համար: Խոսքը տեխնիկայի մասին է: Գաղտնիք չէ, որ հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի մեծ մասն անհուսալիորեն մաշված էր: Դա մեծապես ազդում էր աշխատանքների որակի և ծավալի վրա: Բնականաբար, սկզբից և եթե դրված էր գյուղտեխնիկայի պարկը թարմացնելու խնդիրը: Առաջին քայլը դեռ «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցությամբ Մարտակերտում



ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ»-ն
օգնում է ԼՂՀ գյուղատնտեսությանը

ԼՂՀ-ում բոլոր պայմանները կան ունենալու զարգացած գյուղատնտեսություն, դրանում համոզված է ԼՂՀ «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ»-ը: Այն ստեղծվել է 2006 թվականին՝ ԼՂՀ կառավարության որոշմամբ: Հիմնադրամը նպատակ ունի աջակցել ոլորտի զարգացմանը, օժանդակել Արցախում ՀՀ և Սփյուռքի գյուղատնտեսական բնագավառի գիտական արդյունքների օգտագործմանը, առանձին գիտահետազոտական և ռազմավարական ծրագրերի իրականացմանը: Հիմնադրամն անխտիր համագործակցում է բոլոր նրանց հետ, ովքեր ցանկանում են Արցախում զբաղվել գյուղատնտեսությամբ և օգնում է թե՛ պետական, թե՛ մասնավոր միջոցներով:

առաջին մեքենատրակտորային կայանի ստեղծումն էր: Չենք անտեսել նաև գյուղատնտեսության մյուս, ոչ պակաս կարևոր ճյուղը՝ անասնապահությունը: Այստեղ պետք էր աշխատել ինչպես քանակը, այնպես էլ որակը բարելավելու ուղղությամբ: Մեր հանրապետությունն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների բազմազանությամբ: Այնպես որ ոչ միայն շրջանները, այլև ենթաշրջաններից շատերն էին առանձնահատուկ մոտեցում պահանջում: Այսպես ծագեց ենթաշրջանային զարգացման ծրագրերը կյանքի կոչելու գաղափարը:

Այսօր աշխատանքները շարունակվում են այս բոլոր ուղղություններով: 2008 թվականին հիմնադրամը կատարել է ավելի քան 840 մլն դրամի փոխառություն, 51.6 մլն դրամի սուբսիդավորում, 284 մլն լիզինգավորում, 34 մլն դրամի անհատույց աջակցություն և նոր տեխնոլոգիաների ուսումնասիրում, ինչպես նաև 855 հազար դրամի ներդրում: Ընդհանուր առմամբ, 2008 թվականին հիմնադրամի կողմից գյուղատնտեսության ոլորտում ավելի քան 1 մլրդ 213 մլն դրամի ներդրումներ են կատարվել: Սակայն խնդիրը ոչ այնքան ծրագրերում ներգրավվող ֆինանսական միջոցների ավելացումն էր, որքան այն, որ աստիճանաբար հստակեցվում էր՝ հատկապես՝ ո՛ր ուղղությամբ պետք է տարվեին աշխա-

տանքները. 2008 թվականն այս առումով որոշիչ եղավ:

-Ծրագրերը բավական կարևոր են և ֆինանսական մեծ միջոցներ պահանջող: Ի՞նչ աղբյուրներից են ֆինանսավորվում հիմնադրամի ծրագրերը:

Օրակարգում ինչպես նոր ձեռնարկումներն են, այնպես էլ ավանդական մշակաբույսերը եղանակի անսպասելի փոփոխություններից պաշտպանելու խնդիրն է: Հենց այդ նպատակով Արցախում սկսել ենք տեղադրել հակակարկտային կայաններ: Դա, ինչպես նաև բազմաթիվ այլ ծրագրեր, շարունակական են լինելու: Հիմնադրամը մշտապես որոնելու է նոր եղանակներ՝ ԼՂՀ գյուղատնտեսությունը զարգացնելու համար

-Սկզբնական շրջանում ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում բացարձակ գերակշռում էին պետական միջոցները: Ավելի ուշ սկսեցինք ներգրավել նաև բարեգործական և զարգացման տարբեր ծրագրերի շրջանակներում ստացվող ֆինանսական միջոցներ: Վերջին շրջանի նորույթն այս առումով այն էր, որ սկսեցինք օգտագործել բանկա-

յին ռեսուրսը: Արդյունքում հիմնադրամն իրականացրել է ավելի քան 7 մլրդ դրամի ծրագրեր: Շուրջ 5 միլիարդը կազմում են փոխառությունները, որոնցից 3 մլրդ 200 միլիոնը՝ զրո տոկոս տոկոսադրույքով: Շուրջ 350 մլն դրամ է հատկացվել լիզինգային ծրագրերին: Դրանց շրջանակներում մեր քաղաքացիները ձեռք են բերել մեծ թվով տեխնիկա՝ տարբեր մակերեսների տրակտորներ, կոմբայներ, գանազան սարքավորումներ: Ավելի քան 700 մլն դրամ է ուղղվել սուբսիդավորման ծրագրերին: Դրանից 400 միլիոնը հատկացվել է հողօգտագործողներին տրամադրվող առանձին արժեքներին՝ սերմացուի, պարարտանյութի մասնակի սուբսիդավորմանը, իսկ 300 միլիոնը՝ բանկերի կողմից տրամադրված վարկերի տոկոսների մասնակի սուբսիդավորմանը:

-Պարոն Բաղդասարյան, ըստ Ձեզ, գյուղատնտեսությունը շարունակո՞ւմ է մնալ ռիսկային ոլորտ, որից բանկերը, ինչպես առաջ, խուսափում են, քանի որ գյուղական բնակավայրերում առաջարկվող գրավի առարկան բանկի համար, մեղմ ասած, գրավիչ չէ՝ իրացվելիության ցածր մակարդակի պատճառով:

-Այո՛, բանկերը շարունակում են գյուղատնտեսության ոլորտը համարել ռիսկային, իսկ գյուղական բնակավայ-



րերում առաջարկվող գրավի առարկաները՝ ոչ այնքան հրապուրիչ: Հիմնադրամը լավ էր պատկերացնում՝ ինչու են բանկերը խուսափում այս ոլորտից: Բնականաբար, նրանց համագործակցության մղելու լավագույն տարբերակը վերը թվարկված ռիսկերն իրենց մասով նվազագույնի հասցնելն էր, ինչն էլ արեցինք: Այսօր մենք սուբսիդավորում ենք տոկոսադրույքի մի մասը և երաշխավորում վարկառուին: Դրանով լուծվում են բանկերի համար երկու կարևոր խնդիր-



ները: Ինչ վերաբերում է վարկառուներին, ապա նրանք արդեն գրավի հետ

կապված ռիսկերն ունենում: Նրանց կողմից բարձրաձայնվող ռիսկերն են հիմնականում փաստաթղթային ծևակերպումների բարդությունների հետ են կապված, որոնք ևս փորձում ենք նվազագույնի հասցնել: Բայց, ի վերջո, վարկերը տրվում են գործարար ծրագրերի իրականացման նպատակով, իսկ նման ծրագրեր ներկայացնողները, բնականաբար, պետք է սովորեն նաև փաստաթղթերի հետ աշխատել: Առավել ևս, որ արդեն երրորդ տարին

է, ինչ այս ուղղությամբ աշխատում ենք բանկերի հետ: Առ այսօր շուրջ 300 մլն դրամ է ուղղվել բանկերի կողմից տրամադրված գյուղատնտեսական վարկերի տոկոսների մասնակի սուբսիդավորմանը, ինչի արդյունքում ավելի քան 3 մլրդ 500 մլն դրամ է ներգրավվել գյուղատնտեսական ծրագրերի իրականացման նպատակով: Այդ ճանապարհին համագործակցում ենք «Արցախբանկ»-ի, «Հայբիզնեսբանկ»-ի և «Բլեսս» վարկային կազմակերպության հետ: Համագործակցության լուրջ հեռանկարներ կան նաև «Արդշինինվեստբանկ»-ի հետ:

-Իսկ անասնապահության ոլորտում ի՞նչ ծրագրեր է իրականացրել հիմնադրամը:

-Այս դաշտում մեր ծրագրերը այնքան բազմազան չեն, որքան երկրագործության ոլորտում: Դա մասամբ պայմանավորված է պահանջարկով: Այս ոլորտում իրականացված վերափոխումներին հաջորդած ժամանակահատվածում՝ տոհմային գործի անտեսման և արհեստական սերմնավորման ծավալների



Անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել տոհմաբուծությանը: Հենց այդ նպատակով արտերկրից ներկրել ենք շվից և ֆլեգվի ցեղատեսակների երիւնջներ: Միաժամանակ կենդանիների արհեստական սերմնավորման գործընթացն ենք դրել գործնական և կազմակերպված հիմքերի վրա





զգալի կրճատման արդյունքում, վտանգվել է հանրապետության պայմաններին հարմարեցված անասունների ցեղերի գենոֆոնդի պահպանությունը, տեղի է ունեցել հետադարձ տրամախաչում, և հատկապես վատացել են խոշոր եղջերավոր անասունների տոհմային հատկանիշները, ուստի անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել տոհմաբուծությանը: Հենց այդ նպատակով արտերկրից ներկրել ենք շվից և Ֆլեգլի ցեղատեսակների երինջներ: Միաժամանակ կենդանիների արհեստական սերմնավորման գործընթացն ենք դրել գործնական և կազմակերպված հիմքերի վրա: Չուտ դրամական աջակցության առումով այս ոլորտում 2 հիմնական ուղղությամբ ենք աշխատում. առաջինը՝ անասնավարկերն են, որոնց տոկոսները մասնակի սուբսիդավորում ենք, իսկ երկրորդը՝ լիբանանահայ գործարարների աջակցությամբ տրամադրվող, այսպես ասած, փոքր անասնավարկերն են՝ մեկուկես միլիոն դրամի սահմաններում: Դրանք տրամադրվում են հիմնականում Զաշաթաղի և Զարվաճառի շրջանների բնակիչներին:

-Հիմնադրամի նպատակների շարքում նշեցիք նաև գյուղատեխնիկայի պարկի թարմացման անհրաժեշտությունը: Ի՞նչ արդյունքներ կան այս ճանապարհին:

-Անկախությունից ի վեր նոր գյուղատեխնիկա չէր ներմուծվել Արցախ: Հանրապետությունում առկա գյուղատնտեսական տեխնիկայի հիմնական մասի շահագործման ժամկետները վաղուց արդեն լրացել էին, իսկ այլընտրանք չկար: Այդ տեխնիկան հնարավոր վերանորոգումից հետո շարունակում էինք գործածել՝ ի հաշիվ աշխատանքի որակի և ծավալի: ԼՂՀ-ում առկա գյուղատնտեսական տեխնիկայի 97%-ն օգտագործվում է ավելի քան 20 տարի՝ օգտագործման նորմատիվային 8 տարվա փոխարեն: Հաշվի առնելով, որ այն ամբողջությամբ ենթարկվել է ֆիզիկա-

կան և բարոյական մաշվածության, խիստ կարևորվում է տեխնիկական պարկի նորացումը: Անհրաժեշտ է նշել, որ առկա գյուղատեխնիկան անհավասարաչափ է բաշխված հանրապետության շրջանների և գյուղերի միջև, իսկ շատ գյուղերում բացակայում են գյուղատնտեսական որոշ սարքավորումներ: Բարեբախտաբար, այսօր հնարավորություն կա, և առաջնահերթ լուծման ենթակա խնդիրների շարքում դրված է նաև գյուղատեխնիկայի պարկի թարմացման հարցը: Դա լուծվում է 2 ուղղությամբ: Մի կողմից հենց հիմնադրամի կազմում ստեղծում ենք մեքենատրակտորային կայաններ, որոնք համալրում ենք նոր տեխնիկայով, մյուս կողմից մեկնարկում է լիզինգային պայմաններով տեխ-

Հիմնադրամի առաջին ծրագրերից մեկն ուղղված էր հողերի բերրիության բարձրացմանը: Անհրաժեշտ էր կազմակերպված աջակցություն ցուցաբերել սեփականաշնորհված հողերը մշակող սեփականատերերին՝ աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու, սերմացու, դիզվառելիք և պարարտանյութ ձեռք բերելու նպատակով: Դա հաջողվել է ապահովել անտոկոս փոխառությունների շնորհիվ: Ուշադրությունից դուրս չեն մնացել նաև վարձակալված հողեր մշակողները. նրանց հատկացվել են վարկային միջոցներ՝ ցածր տոկոսադրույքերով



նիկայի տրամադրման գործընթացը, որում բավական մատչելի պայմաններով կարող են ներգրավվել մեր քաղաքացիներից շատերը: Նաև փոխառություններ ենք տրամադրում՝ օգտագործված տեխնիկայի ձեռքբերման նպատակով: Ներկայումս հիմնադրամի կազմում գործում են մեքենատրակտորային 4 կայաններ: Նրանք միասին 396 միավոր տեխնիկա ունեն, որից 104-ը՝ տրակտոր և կոմբայն: Առաջին փուլում մեզ հենց տրակտորներ ու կոմբայններ էին անհրաժեշտ, քանի որ հանրապետությունում տեսակարար կշռով առաջին տեղում հացահատիկի մշակումն է:

-Ինչպիսի՞ նորություններ է խոստանում հիմնադրամը:

-Ժամանակը թելադրում է փոփոխություններ: Այսօրվա պահանջը գյուղատնտեսության ոլորտում ակտիվ զարգացում և բազմազանություն ապահովելն է. մեր հանրապետության բնակլիմայական պայմանները նման հնարավորություն տալիս են, և մենք այս ուղղությամբ արդեն գործնական քայլեր ենք ձեռնարկում: Հիմնադրամի կազմում գործող մեքենատրակտորային կայանները 2011 թվականին ավելի քան 1700 հա են մշակել՝ 21 մշակաբույս՝ եգիպտացորեն, հնդկացորեն, սոյա, հլածուկ, արևածաղիկ: Դրանց մի մասի մշակությունը դեռ փորձնական փուլում է: Մնացած նորա-

րարություններն անհրաժեշտությունից են բխում: Հանրապետություն ենք ներմուծել նոր տեխնիկա, վերամշակման համար անհրաժեշտ սարքավորումներ: Օրակարգում ինչպես նոր ձեռնարկումներն են, այնպես էլ ավանդական մշակաբույսերը եղանակի անսպասելի փոփոխություններից պաշտպանելու խնդիրն է: Հենց այդ նպատակով Արցախում սկսել ենք տեղադրել հակակարկտային կայաններ: Դա, ինչպես նաև բազմաթիվ այլ ծրագրեր, շարունակական են լինելու: Հիմնադրամը մշտապես որոնելու է նոր եղանակներ՝ ԼՂՀ գյուղատնտեսությունը զարգացնելու համար:

ԱՎԱՆՂԱԿԱՆ ԳՈՒԹԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ՝ «ՆՈՐԸ»

Կովսականի վերաբնակիչների ձեռքբերումը՝ հանուն արդյունավետ մշակության

Քաշաթաղի հարավում՝ Կովսականի ենթաշրջանում, մի խումբ հողագործներ ոչ միայն Նոր մշակաբույսեր են առաջարկում, այլև Նոր տեխնոլոգիա՝ հին ու ծանոթ մշակաբույսերի մշակության համար: Բավական գրավիչ է հնչում՝ Էժան, արագ և որակով: Սա առաջարկում են Կովսականում հաստատված և ցանքս կատարող սիրիահայերը: Նրանց աշխատանքները զգալիորեն տարբերվում են մեզ համար ավանդական դարձած աշխատանքներից՝ անգամ իրենց շահութաբերությամբ: Սիրիայից ԼՂՀ եկած հայերի գործածած տեխնիկան որոշակիորեն զանազանվում է նաև ավանդական գութանից և շարքացանից: «Սովորական գութանով երկու անգամ հերկելու և մեկ անգամ հողը հարթեցնելու փոխարեն այս սարքավորումով մենք մեկ անգամ ենք հողը մշակում, և այն պատրաստ է ցանքսին», - մանրամասնում է Կովսականի վերաբնակիչ Ժիրայր Տոնապետյանը, ով տարիներ ի վեր օգտագործում է այդ տեխնիկան: Հողագործի համոզմամբ՝ դրա շնորհիվ նաև մոլախոտերի դեմ պայքարն է արդյունավետ դառնում: Նոր տեխնիկան կտրատում է արմատները, հնձված արտերում ծղոտն ու խոզանն է ջարդում և հողը միանգամից նախապատրաստում ցանքսին: «Արդյունքում հողօգտագործողը կարող է լուրջ տնտեսում անել: Կարելի է մոտ կրկնակի քիչ ծախսել, փոխարենն աշխատանքներն ավելի բարձր որակով և արագ կազմակերպել», - վստահեցնում է Ժիրայր Տոնապետյանը, ով արդեն հասցրել է ծանոթանալ Արցախում և, մասնավորապես, Կովսականում հա-



Սիրիայից ԼՂՀ եկած հայերի գործածած տեխնիկան որոշակիորեն զանազանվում է նաև ավանդական գութանից և շարքացանից: Հողագործի համոզմամբ՝ դրա շնորհիվ նաև մոլախոտերի դեմ պայքարն է արդյունավետ դառնում: Նոր տեխնիկան կտրատում է արմատները, հնձված արտերում ծղոտն ու խոզանն է ջարդում և հողը միանգամից նախապատրաստում ցանքսին

ցահատիկի մշակության նրբություններին: Նոր բնակիչներին առաջարկել են սկզբի համար նմանատիպ ևս 3 սարքավորում բերել Կովսական, սակայն Սիրիայից ներկրելը թանկ կարժենար, ուստի նրանք այլընտրանք են գտել: «Հրավիրել ենք մասնագետի, ով հենց տեղում է հավաքել տեխնիկան», - պատմում է Կովսականի սիրիահայ վերաբնակիչ Միեր Պետրոսյանը և հավելում, որ այդ մեկը բնօրինակից հզոր է լինելու: Առաջին օրինակը պատրաստ էր

աշխատանքի աշխատանքների նախօրեին: Այն հանձնվել է Իշխանաձորի մեքենատրակտորային կայանին, որն էլ գործնականում կփորձարկի առաջարկվող նորույթի արդյունավետությունը: Այս ուղղությամբ հետագա քայլերը կախված կլինեն հենց այդ քննության արդյունքներից: Եթե Նոր տեխնիկան իսկապես ավելի Էժան, արագ և արդյունավետ լինի, Կովսականի սիրիահայ վերաբնակիչների «նորարարությունը» մեծ պահանջարկ կունենա: 

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Փետրվար

I	II	III	IV	V	VI	VII
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29				

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am

ՀԶՈՐ ՏԵԽՆԻԿԱ՝ ԱՌԱՏ ԲԵՐՔ

«Ագրոտնտեսություն թիվ 1»-ն իր նորարարություններով զարկ է տալիս Արցախի գյուղատնտեսության զարգացմանը



Արցախի գյուղատնտեսության ոլորտում ակտիվ դերակատարություն ունեցող «Ագրոտնտեսություն թիվ 1» ՓԲԸ-ն հաջողությունների հասել է շատ կարճ ժամանակում: Դեռ 2010 թվականի հոկտեմբերի 1-ն էր, երբ ընկերությունն իր առաջին քայլերը կատարեց, որոնք բարձրացրին նրան դեպի այսօրվա հաջողությունները: Գաղտնիքը, ըստ ընկերության գլխավոր գլխավոր մեխանիկ Յուրի Գասպարյանի, համակարգված աշխատանքի մեջ է: «Չարգացումները տանում են նրան, որ ոչ հեռու ապագայում ընկերությունն արմատական դեր է ստանձնելու ոլորտում», - վստահեցնում է Յուրի Գասպարյանը: Աշխատանքները պահանջված մակարդակով կազմա-

կերպելու առաջին պայմանը անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունն է: Այդ խնդիրը «Ագրոտնտեսություն թիվ 1»-ի համար արդեն լուծված է: Ավելի ուշ հիմնադրվելով հանդերձ՝ այն Արցախում գործող նմանատիպ կազմակերպությունների համեմատությամբ շահեկան դիրքերում է հայտնվել, քանի որ համալրվել է նոր և հզոր գյուղտեխնիկայով: «Այսօր ունենք «Ջոնդիր» մակնիշի 160 ձիաուժանոց 10 տրակտոր՝ իրենց բոլոր սարքավորումներով, ևս երկու «Ջոնդիր»՝ 70 ձիաուժանոց, «Բելոռուս» մակնիշի 5 տրակտոր, 5 կոմբայն՝ կրկին «Ջոնդիր» ֆիրմայից: Դրանցից մեկն ունի նաև եգիպտացորենի հնձիչ», - ունեցածը հասկանալի հպարտությամբ է թվարկում կազմա-

կերպության գլխավոր մեխանիկը և նշում նոր տեխնիկայի առավելությունները՝ արագ, որակյալ, առանց խափանումների: Յուրի Գասպարյանը նոր գյուղտեխնիկան նախկինի հետ այլևս չի համեմատում. դրա արտադրողականությունը, ըստ նրա, մինչև 3 անգամ գերազանցում է հին տեխնիկայի հզորությունը: Կազմակերպության տեխնիկական պարկը շարունակում է համալրվել. ներմուծում են եգիպտացորենի հնձիչներ, սիլոսացման համար անհրաժեշտ սարքավորումներ, խոտամալիչներ՝ աշխատանքների հետագա ընթացքը հաշվի առնելով: Այս թվարկումից հետևությունը մեկն է. գյուղտեխնիկայով «Ագրոտնտեսություն թիվ 1»-ը հարուստ է: Մնում է պարզել՝ ինչպես է




անցած մեկ տարվա ընթացքում օգտագործվել այդ հնարավորությունը: Կազմակերպության գլխավոր մեխանիկը վստահեցնում է, որ տեխնիկան արդյունավետ են օգտագործել: Ինչպես շատերը, «Ագրոտնտեսություն թիվ 1»-ը ևս նախապատվությունը ցորենի մշակությանն է տվել: Բերքատվության միջին ցուցանիշներից դժգոհ չեն. հեկտարից ստացել են 20 ցենտներ՝ չնայած Գասպարյանը խոստովանում է՝ հնարավոր էր ավելի բարձր արդյունքներ ապահովել: Փոխարենը միայն ավանդական մշակաբույսերով չեն սահմանափակվել. «Ագրոտնտեսություն թիվ 1»-ը նորարարություններով զբաղվելու առաքելություն է ստանձնել: Ընկերությունը մշտապես որոնել է պատասխան այն հարցի, թե ի՞նչ ցանեն՝ հողերի հնարավորությունները լավագույն ձևով օգտագործելու և ավելի մեծ շահույթ ստանալու համար՝ այդ ընթացքում հողը ոչ թե ուժասպառ անելով, այլ հարստացնելով: Այդ ուղղությամբ «Ագրոտնտեսություն թիվ 1»-ը անցած մեկ տարվա ընթացքում որոշակի գործնական միջոցներ է ձեռնարկել. 2011 թվականին Արցախի բնական պայմանների համար նոր մշակաբույսեր է ցանել: Սակայն միշտ չէ, որ ընկերության նորարարությունները հաջողությամբ են պսակվել: Յուրի Գասպարյանը չի թաքցնում անհաջողությունները և հիշատակում է ոսպի մշակության փորձը. «Այս տարի չհաջողվեց բերք ստանալ, որովհետև ծանոթ չէինք մշակման տեխնոլոգիային»: Փոխարենը «Ագրոտնտեսություն

թիվ 1»-ում այս տարի ցանված 36 հա սորգոյից, 10 հա արևածաղկից և 4 հա սոյայից լավ բերք է ստացվել: Դժգոհ չեն եգիպտացորենի բերքատվության ցուցանիշներից՝ 40 ցենտներ՝ հեկտարից: Ցանել են նաև 10 հա հնդկացորեն, անգամ՝ շաքարի ճակնդեղ՝ 1 հա: Այս դեպքում՝ լավագույն ակնկալիքները մի քանի անգամ գերազանցել են: «Մեկ հեկտարից մոտ 80 տոննա բերք ենք հավաքել, այնինչ ակնկալում էինք 20-30 տոննա», -զարմացնելու առիթը չի կորցնում Յուրի Գասպարյանը: «Ագրոտնտեսություն թիվ 1»-ի համար բերքի սպառման լուրջ փորձություն էր վաղահաս կարտոֆիլի իրացումը: Այդ առումով նաև կորուստներ են ունեցել, բայց դժվարությունն ի վերջո հաջողվել է հաղթահարել: Սորգոն և սոյան այս տարի որպես անասնակեր են ծառայելու և օգտագործվելու տոհմակայանների կողմից: Նույն նպատակին են ծառայելու նաև շաքարի ճակնդեղը և արևածաղիկը: Վերջինս հետագա տարիներին օգտագործվելու է ձեթի արտադրության մեջ: Ընդ որում, արտադրությունը կազմակերպվելու է Արցախում: Ինչ վերաբերում է եգիպտացորենին և հնդկացորենին, ապա դրանք լրացուցիչ մշակման են ենթարկվելու և իրացվելու են հենց հանրապետության ներսում: «Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ»-ը գործնական քայլեր է կատարում՝ վերամշակման համար անհրաժեշտ տեխնիկական բազա ապահովելու ուղղությամբ: Խրամորթում հոկտեմբերի սկզբից արդեն սկսվել են եգիպտացորենի չորանոցների



«Ագրոտնտեսություն թիվ 1»-ում այս տարի ցանված 36 հա սորգոյից, 10 հա արևածաղկից և 4 հա սոյայից լավ բերք են ակնկալում: Դժգոհ չեն եգիպտացորենի բերքատվության ցուցանիշներից՝ 40 ցենտներ՝ հեկտարից: Ցանել են նաև 10 հա հնդկացորեն, անգամ՝ շաքարի ճակնդեղ՝ 1 հա: Այս դեպքում՝ լավագույն ակնկալիքները մի քանի անգամ գերազանցել են: Արևածաղիկը հետագա տարիներին օգտագործվելու է ձեթի արտադրության համար: Ընդ որում, արտադրությունը կազմակերպվելու է Արցախում: Ինչ վերաբերում է եգիպտացորենին և հնդկացորենին, ապա դրանք լրացուցիչ մշակման են ենթարկվելու և իրացվելու են հենց հանրապետության ներսում

մոնտաժման աշխատանքները: Դրանից շատ չանցած՝ հանրապետություն են ներմուծվելու նաև հնդկացորենի վերամշակման համար նախատեսված սարքավորումները: «Ագրոտնտեսություն թիվ 1»-ում այս ամենը հաշվի առնելով են





Յուրի Գասպարյանը Նոր գյուղտեխնիկան նախկին հետ այլևս չի համեմատում. դրա արտադրողականությունը, ըստ Նրա, մինչև 3 անգամ գերազանցում է հին տեխնիկայի հզորությունը: Կազմակերպության տեխնիկական պարկը շարունակում է համալրվել. ներմուծում են եգիպտացորենի հնձիչներ, սիլոսացման համար անհրաժեշտ սարքավորումներ, խոտամամլիչներ՝ աշխատանքների հետագա ընթացքը հաշվի առնելով: Այս թվարկումից հետևությունը մեկն է. գյուղտեխնիկայով «Ագրոտնտեսություն թիվ 1»-ը հարուստ է

ծրագրում հետագա աշխատանքները: «2012 թվականին նախատեսում ենք ցանել 32 հեկտար սոյա, 20 հեկտար հլածուկ, 36 հեկտար հնդկացորեն, 35 հեկտար արևածաղիկ, 38 հեկտար եգիպտացորեն և մոտ 180 հեկտար ցորեն», - մասամբ գաղտնագրեծում է գլխավոր

մեխանիկը՝ ավելացնելով, որ բաջարեղենի մշակման վերջնական որոշումը կլինի գարնանը:

Նորարարություններով և փորձարկումներով զբաղվելը միայն «Ագրոտնտեսություն թիվ 1»-ի առաքելությունը չէ: «Արցախում հողի մշակությամբ զբաղվում են գրեթե բոլորը, այն դեպքում, երբ մասնագետներին կարելի է մատների վրա հաշվել, - տարակուսանք է հայտնում Յուրի Գասպարյանը՝ մասամբ հենց դրանով բացատրելով վերջին տարիներին արդեն օրինաչափության վերածված բերքատվության ցածր ցուցանիշները. «Այս ամենի պատճառն այն է, որ գյուղատնտեսությամբ զբաղվում են ոչ մասնագիտորեն՝ հաճախ խախտելով տարրական կանոնները»: «Ագրոտնտեսություն թիվ 1»-ի աշխատանքները նաև այդ բացը լրացնելուն են միտված: Նախ՝ սեփական փորձի հիման վրա՝ գործնականում ցույց են տալիս՝ ինչպես պետք է մշակել հողը, ինչպես կազմակերպել ցանքաշրջանառությունը, ինչպիսի պարարատանյութեր օգտագործել առանձին դեպքերում: Շրջակա գյուղերի բնակիչներից շատերը յուրացնում են այդ փորձը և արդյունքներից էլ դժգոհ չեն: «Հաճախ իրենք են գալիս, հարցնում, հետաքրքրվում», - ուրախությամբ է ընդգծում Յուրի Գասպարյանը: Գյուղերի բնակիչներից շատերն այդ աշխատանքներին ոչ միայն ականատես լինելու, այլև մասնակցելու և դրա դիմաց գումար վաստա-

կելու հնարավորություն ունեն: Միայն հրամորթից «Ագրոտնտեսություն թիվ 1»-ի աշխատանքներին վեց տասնյակից ավելի մարդ է մասնակցում՝ միջինը 4000 դրամ օրավարձով: «Աշխատավարձի հետ կապված պարտքեր չունենք», - վստահեցնում է կազմակերպության գլխավոր մեխանիկը: Իր ունեցած տեխնիկան «Ագրոտնտեսություն թիվ 1»-ը միայն իր կողմից օգտագործվող հողերը մշակելու համար չի օգտագործում: Համապատասխան պայմանագրերի առկայության պարագայում կազմակերպությունը ծառայություններ է մատուցում նաև շրջակա տարածքների հողօգտագործողներին՝ միջին շուկայական գներով: Ըստ կազմակերպության գլխավոր մեխանիկի՝ հողօգտագործողներին «Ագրոտնտեսություն թիվ 1»-ի ծառայություններից օգտվել շահագրգռում է աշխատանքների որակը, որը վերահսկվում և երաշխավորվում է մասնագետների կողմից: Իսկ ինքը՝ «Ագրոտնտեսություն թիվ 1»-ը, այսօր մասնագետների պակաս ունի, հատկապես՝ տեխնիկական սպասարկող անձնակազմում: «Մենք երիտասարդ կադրերի խնդիր ունենք. վաղուց արդեն սերնդափոխությանը նախապատրաստվելու ժամանակն է», - նկատում է Յուրի Գասպարյանը ոլորտում առկա գլխավոր խնդիրներից մեկը և հույս հայտնում, որ մոտ ապագայում իրենց գործը շարունակելու կգան երիտասարդ, առույգ գյուղատնտեսներ ու տեխնիկական սպասարկողներ: ☑



ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ

ՀԱՏԿԱՊԵՍ

ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Մարտ

I	II	III	IV	V	VI	VII
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

բոլոր մանրամասներն այստեղ՝

www.tax.nk.am



**Հայաստանի պետական ագրարային համալսարանի՝
Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Վահրամ Հայրապետյան.
«Ագրարային երկրում ապագան ագրարային բուհինն է:
Այն կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունից կվերածվի
գիտական կենտրոնի»**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գյուղատնտեսական երկիր է: Դեռևս անցյալ դարի 70-80-ական թվականներին նախկին մարզը գյուղատնտեսության ոլորտում ունեցած հաջողություններով մեծ համբավ էր վայելում խորհրդային հանրապետությունների շրջանում: Ոլորտի զարգացումը անհնար է պատկերացնել առանց ոլորտը համապատասխան որակյալ մասնագետներով ապահովող բարձրագույն ուսումնական հաստատության: Արդեն 3 տարի է գործում է նման կառույց: Դա Հայաստանի պետական ագրարային համալսարանի մասնաճյուղն է:

ԼՂՀ գյուղատնտեսության ոլորտում մասնագետների պատրաստման առաքելությունն այսօր վստահված է Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղին: Այն գյուղատնտեսական բնագավառի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է ԼՂՀ-ում և սկսել է գործել 2009 թվականի հունվարից: Թեև մինչ այդ այստեղ գոյություն ունեին Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջը և Արցախի պետական համալսարանի ագրարային ֆակուլտետը, այնուամենայնիվ, պատմական երևույթ է Արցախում առանձին գյուղատնտեսական բուհի հիմնադրումը այդ երկու-

սի հիման վրա: «Այսօր մասնաճյուղը միջին, բակալավրիատի և մագիստրատուրայի համակարգում մոտ 1200 ուսանող ունի՝ առկա և հեռակա ուսուցմամբ», - հպարտությամբ ներկայացնում է ՀՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն Վահրամ Հայրապետյանը: Հպարտությունը հասկանալի է. մի քանի տարի առաջ գյուղատնտեսության հետ կապված մասնագիտությունները քչերին էին գրավում, իսկ այսօր արդեն շատ երիտասարդներ են նախընտրում դրանք: «Մեր երկիրն առաջին հերթին ագրարային զարգացման հեռանկարներ ունի: Իսկ հանրապետության ողջ տարածքում դեռ կա գյուղատնտես-



րի, մեխանիկների, անասնաբույժների և անասնաբույժների կարիք», - նշում է Վահրամ Զայրապետյանը: Այդ պատճառով պետությունը և մասնավոր հատվածը շահագրգռված են, որպեսզի բուհի շրջանավարտն ունենա մասնագիտական բարձր որակ: ԶՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղը, թեև դեռ կայացման փուլում է, սակայն արդեն ունի ուսումնական ամուր հիմք, ընդլայնվել է առաջարկվող մասնագիտություններ

րաստման դասընթացներ. վերապատրաստվել է 40 գյուղատնտես:

Զանրապետությունում գյուղատնտեսական միակ բարձրագույն ուսումնական հաստատության կայացումը որոշ առումով նաև ռազմավարական հարց է, ուստի ստեղծման օրից այն գտնվում է պետական հոգածության ներքո: Այսօր մասնաճյուղի առկա ուսուցման համակարգի ուսանողներից միայն 225-

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԸ «ՅԵՐԿՈՂՆԵՐ»

ԶՊԱՀ-ն կրթում է գյուղատնտեսության ապագա մասնագետներին

րի ցանկը: «Անելիքները դեռ շատ են. ուսումնատեխնիկական հնարավորությունները պետք է ընդլայնենք, ժամանակակից լաբորատորիաներ ստեղծենք, իսկ առաջնային խնդիրը մասնաճյուղի շենքային պայմանների բարելավումն է», - նշում է Վահրամ Զայրապետյանը: Այսօր բուհի համար կարևորագույն խնդրի լուծումն արդեն ընթացքի մեջ է. ԶՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի համար նախատեսված շենքը կառուցվում է Ծուշիում և պատրաստ կլինի հաջորդ տարի: Իսկ մինչ այդ համալսարանում փորձում են ունեցած հնարավորություններով բավարարվել: Մասնաճյուղի տնօրենի վստահեցմամբ՝ մասնագիտական ներուժի պակաս բուհը չունի. կան բարձր որակավորմամբ դասախոսներ: Անհրաժեշտության դեպքում նեղ մասնագիտական առարկաների դասավանդման նպատակով դասախոսներ են հրավիրվում Զայաստանի պետական ագրարային համալսարանից: Իսկ այս տարի գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ հանրապետության գյուղատնտեսների համար կազմակերպվել են վերապատ-

րաստման վճարովի հիմունքերով, այսինքն՝ շուրջ 40 %-ի ուսման վարձը վճարում է պետությունը: ԶՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենը վստահեցնում է՝ իրենց շրջանավարտները մրցունակ են աշխատաշուկայում: «Դա միայն իմ կարծիքը չէ: Այդ համոզմանն են նաև ավարտական քննությունների մասնակցելու համար Երևանից հրավիրված մասնագետները», - ընդգծում է Վահրամ Զայրապետյանը: Նա համոզված է, որ բուհն իր ներդրումը կունենա հանրապետության գյուղատնտեսական ոլորտի զարգացման, որակյալ մասնագետների պատրաստման և գիտական բազմաբնույթ հետազոտությունների իրականացման գործում: «Ագրարային երկրում ապագան ագրարային բուհինն է: Այն կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունից կվերածվի գիտական կենտրոնի, որտեղ կկռվի հանրապետության գյուղատնտեսության ոլորտում տարվող քաղաքականության հիմնարար հայեցակարգը՝ սկսած գիտական ծրագրերից, վերջացած ոլորտը բարձրորակ



Զանրապետությունում գյուղատնտեսական միակ բարձրագույն ուսումնական հաստատության կայացումը որոշ առումով նաև ռազմավարական հարց է, ուստի ստեղծման օրից այն գտնվում է պետական հոգածության ներքո: Այսօր մասնաճյուղի առկա ուսուցման համակարգի ուսանողներից միայն 225-ն է սովորում վճարովի հիմունքերով, այսինքն՝ շուրջ 40 %-ի ուսման վարձը վճարում է պետությունը: ԶՊԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենը վստահեցնում է՝ իրենց շրջանավարտները մրցունակ են աշխատաշուկայում

կադրերով համալրելու կենսական գործընթացով», - վստահեցնում է մասնաճյուղի տնօրենը: Ըստ նրա՝ գիտական կենտրոնի խնդիրն է լինելու որակյալ մասնագետների պատրաստման ճանապարհով գյուղատնտեսության մրցունակության ապահովումը, ինչպես նաև նոր գաղափարների և տեխնոլոգիաների ստեղծումը, ներդրումն ու տարածումը:

A photograph of a banana plantation. In the center, a large, dense bunch of green bananas hangs from a tree. The bananas are unripe and have a bright green color. The surrounding area is filled with large, broad green leaves of the banana plants. Some leaves show signs of aging or damage, with brown edges. The ground is covered with dry, brown leaves and debris. The lighting is bright, suggesting a sunny day.

Սպասում են բանանի առաջին բերքին

մությունը չափազանց պարզ և մի քիչ էլ հումորով շաղախված է ներկայացնում։ «Ավելի քան տասը տարի ռաջ այգում մի շատ գեղեցիկ տերև տնկեցի՝ բոլորովին չպատկերացնելով, որ դա հենց քաջածանոթ բանանն է»։ Երջանիկ անտեղյակությունը բավական երկար տևեց՝ մի քանի տարի։ Իսկ տարաշխարհիկ բույսն այդ ընթացքում իրեն բոլորովին վատ չէր զգում։ տարվա տաք եղանակներին փաթթամանում էր, ձմռան ցրտին չէր դիմանում, բայց ամեն գարուն, ի որախություն տանտիրուհու, նորից հողի տակից կանաչ, մեծ տերևներ էին դուրս գալիս։ Արինա Ավագյանը հասցրել էր նկատել, որ դրանք շատ անուշահամ են և գրավում են տնային կենդանիներին, շարժվելու դեպքում էլ քաղցր հյութ է հոսում նրանցից։






Արինա Ավագյանի տնամերձում ավանդական բանջարեղենի՝ բադրիջանի, լոբու հետ հաշտ-համերաշխ ապրում են գետնանուշն ու բանանը: Արդյունքում ձևավորվել է արցախյան մերձարևադարձային այգի: Արինա Ավագյանը խոսել շատ չի սիրում, փոխարենը գերադասում է աշխատել: «Ավելի քան տասը տարի առաջ այգում մի շատ գեղեցիկ տերև տնկեցի՝ բոլորովին չպատկերացնելով, որ դա հենց քաջածանոթ բանանն է»: Երջանիկ անտեղյակությունը բավական երկար տևեց՝ մի քանի տարի: Երեք տարի հատուկ արարողությամբ են դիմավորում ձմեռնամուտը, որպեսզի արևադարձային գոտուց ինչ-ինչ հրաշքով Արցախում հայտնված և արմատակալած հսկա բույսը ցրտից «չվախենա»

ցիկ և անսովոր տերևներ հայտնվեցին նաև գյուղի մյուս բակերում: Բնակիչներն արդեն դադարել էին զարմանալ, երբ 3 տարի առաջ ինտերնետում տեսան «իրենց» բույսը: «Միայն այդ ժամանակ իմացանք, որ դա բանան է», - խոստովանում է Արինա Ավագյանը: Այդ դեպքից հետո բույսի խնամքը նոր իմաստ ստացավ: Տողի բնակիչներն աշխատում էին արդեն ոչ միայն իրենց այգում գեղեցիկ բույս ունենալու հեռանկարով, այլև բերք ստանալու թաքուն հույսով: Երեք տարի հատուկ արարողությամբ են դիմավորում ձմեռնամուտը, որպեսզի արևադարձային գոտուց ինչ-ինչ հրաշքով Արցախում հայտնված և արմատակալած հսկա բույսը ցրտից «չվախենա»: «Աշնան վերջում կտրատում ենք բոլոր տերևները, իսկ մերկ ցողունը խնամքով փաթաթում և այդպես թողնում ենք մինչև գարուն», - արդեն որպես գործի գիտակ՝ հերթականությամբ թվարկում է Արինա Ավագյանը: Վերջապես այս տարի բույսն իր խնամակալին վարձահատույց եղավ. առաջին անգամ ծաղիկներ և պտուղներ հայտնվեցին տերևների վրա: Ցա-

վոք, եղանակային պայմանները՝ առատ անձրևները, կարկուտը, մասնակիորեն վնասեցին տերևներն ու պտուղները: Այդ պատճառով այս տարի սեփական բակում աճեցրած բանան համտեսելու հարցում արցախցիները մի քիչ թերահավատ են, բայց հաջորդ տարի, տիկին Արինայի խոսքով, հավանականությունն ավելի մեծ կլինի: «Խնամքի հարցում ավելի փորձառու կլինենք», - մեկնաբանում է Արինա Ավագյանը՝ պարզաբանելով, որ մտադրվել են բույսը պաշտպանել արցախյան եղանակի քմահաճույքներից: Բանանը տիկին Արինայի բակում աճող միակ տարաշխարհիկ բույսը չէ: Եթե պտուղներով ծանրաբեռնված կիտրոնի թփով նա արդեն չի զարմացնի համերկրացիներին, ապա մանդարինի ծառը Արցախի բակերում նոր երևույթ է: Նորաբնակ է նաև գետնանուշը, և դա էլ դեռ ամենը չէ: Հաջորդ տարի ինքնուս այգեգործը խոստանում է զարմացնել նոր բույսով. բարեկամուհին Հարավային Ամերիկայից սուրճի սածիլ է բերել: Շուտով այն ևս իր պատվավոր տեղը կգտնի Արինա Ավագյանի զարմանալի այգում: ☑






Քաշաթաղի շրջանում միայն մեկ ֆերմեր ավելի քան 140 հեկտար ձմերուկ է ցանել: Սա միակ բանը է, որ զարմացրել է նրա համագյուղացիներին. արցախցի հողօգտագործողին անհասկանալի է դաշտում կատարվողը: Եթե նա սովոր է օգտագոր-

գալը, բացատրելով, որ դա հատուկ տեսակի ձմերուկ է, որն աճեցնում են հենց կորիզի արտադրության համար: Հավաքված կորիզները տեղում չորացնում են՝ հետագայում վերաշակման նպատակով արտահանելու համար: «Չարմանահրաշ» ձմերուկի

լոգոամի գինը տատանվում է 1դոլար 20 ցենտից 1դոլար 40 ցենտի սահմաններում: Պոլ Ալագաչը վստահ է՝ իր արտադրանքի պահանջարկն ավելի շատ է լինելու: Դա



«ՉԱՐՄԱՆԱՀՐԱՇ ՁՄԵՐՈՒԿԻ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ծել ձմերուկի պտղամիսը, լավագույն դեպքում՝ նաև կեղևը, բայց ոչ երբեք՝ կորիզը, ապա այստեղ կատարում են ճիշտ հակառակը: Խնամքով առանձնացվում են կորիզները, իսկ մնացած մասը՝ հյութի և մանրացված պտղամսի տեսքով, մնում է դաշտում: Չարմացած արցախցիներին հանգստացնում է նախաձեռնության հեղինակը՝ ազգությամբ ասորի, Բելգիայից ժամանած Պոլ Ալա-

սպառման շուկան հստակեցված է. բերքն ամբողջությամբ տեղափոխվելու է Գերմանիա: Ասորի ֆերմերի խոսքով՝ սովորաբար հեկտարից ակնկալվում է ստանալ միջինը 1.5 տոննա բերք: Շուկայում այս արտադրանքի 1 կի-

հաշվի առնելով նա նախատեսում է հենց Կովսականում ընդլայնել ձմերուկի մշակությունը՝ մինչև 500-600 հա: Այդ նպատակով անհրաժեշտ է նաև չորանոցներ կառուցել: Նոր ձմերուկի աճեցման ծրագիրը ևս մեկ կարևորություն ունի. ապահովում է տեղացիների զբաղվածությունը: Բերքահավաքի ժամանակ, ըստ պահանջարկի, ձմերուկի դաշտերում աշխատում է 30-50 մարդ: Ասորի ֆերմերը որոշել է ձմերուկով չսահմանափակվել. նպատակ ունի կառուցել տարբեր մրգերի և բանջարեղենի չորացման արտադրամասեր: Նա վստահ է, որ արցախյան այս բարիքները մեծ պահանջարկ կվայելն արտերկրում: ☑

«Չարմանահրաշ» ձմերուկի սպառման շուկան հստակեցված է. բերքն ամբողջությամբ տեղափոխվելու է Գերմանիա: Ասորի ֆերմերի խոսքով՝ սովորաբար հեկտարից ակնկալվում է ստանալ միջինը 1.5 տոննա բերք: Շուկայում այս արտադրանքի 1 կիլոգրամի գինը տատանվում է 1դոլար 20 ցենտից 1դոլար 40 ցենտի սահմաններում: Պոլ Ալագաչը վստահ է՝ իր արտադրանքի պահանջարկն ավելի շատ է լինելու:



Բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝

www.tax.nk.am



*«ԷՌՄԻ» ընկերության գործադիր տնօրեն Վահագն Անթանոսյան.
«Մենք աշխատում ենք ոչ միայն նոր տեխնոլոգիաներով, այլև
նոր մոտեցումներով և հոգեբանությամբ»*

ԼՂՅ հարկային դաշտում գործող «ԷՌՄԻ» ընկերությունը հանրապետության 3 խոշոր հացարտադրողներից մեկն է: Ստեղծվելով ընդամենը 4 տարի առաջ այն այսօր արդեն գերիշխող դիրք է զբաղեցնում բնագավառում՝ ըստ ԼՂՅ Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող հանձնաժողովի: Ընկերությունը, նոր տեխնոլոգիաներ օգտագործելով, արտադրում է հացի և թխվածքների զանազան տեսակներ և դրանց վաճառքը բաշխում հանրապետության տարբեր բնակավայրերի միջև:

12 ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿ՝ ՆՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ

Հացաբուլկեղեն՝ ստեփանակերտցիների և բոլոր արցախցիների համար

-Պարոն Անթանոսյան, ինչպե՞ս սկսվեց ընկերության գործունեությունը:

-Արցախյան տնտեսական դաշտում «ԷՌՄԻ»-ն հայտնվեց 2007 թվականին՝ «Ստեփանակերտի հացի գործարան» և «Ալրաղաց» ընկերությունների հիման վրա, սակայն ոչ իրավահաջորդության կարգավիճակով: Ներկայում «ԷՌՄԻ»-ն ունի 12 արտադրատեսակ՝ հացից մինչև թխվածք: Գործունեության սկզբնական շրջանում արտադրանքն իրացնում էինք

ավանդական եղանակով. բաժանում էինք մթերային խանութներին: Վերջին շրջանում զուգահեռաբար սկսեցինք տեղադրել նաև մեր կրպակները: Այժմ «ԷՌՄԻ»-ի կրպակներ կան ոչ միայն մայրաքաղաք Ստեփանակերտում, այլև Ասկերանում, Շուշիում և Բերձորում: Մեր արտադրանքը հասանելի է հանրապետության բոլոր բնակավայրերում, ընդ որում, գներն ամենուր համապատասխանում են մայրաքաղաքի կրպակների գներին:

-Ի՞նչ է փոխվել 4 տարի անց:

-Ձևավորումից մինչ այժմ երկար ճանապարհ է անցել ընկերությունը և հաղթահարել բազմաթիվ դժվարություններ: Բարդություններից մեկը, որին բախվել ենք, գույքի հիմնաստորագման խնդիրն էր: Թեև կային բավական սարքավորումներ, սակայն դրանց հիմնական մասն արդեն «պատկառելի տարիքի» էր հասել: Հետևաբար մեր կատարած առաջին քայլը հին տեխնիկայի նորոգումը և

Նորի ձեռքբերումն էր: Ընդհանուր առմամբ առ այսօր մոտ 6 մլն դրամի ներդրումներ են կատարել: Նոր սարքավորումներով ենք զինել ցորենի գտման և լվացման արտադրամասը: Հին, մեխանիկական սարքերի մեծ մասը փոխարինել ենք պնևմատիկ(օդաճնշական) սարքավորումներով: Նոր տեխնիկայով է հագեցած նաև հացի արտադրամասը: Հարկ է նշել, որ թեև արտադրողականությունը մնացել է գրեթե անփոփոխ(օրվա կտրվածքով 70 տոննա), սակայն էապես բարելավվել է արտադրանքի որակը: Ընկերության աշխատակից-



Մեր կատարած առաջին քայլը հին տեխնիկայի նորոգումը և Նորի ձեռքբերումն էր: Ընդհանուր առմամբ առ այսօր մոտ 6 մլն դրամի ներդրումներ են կատարել: Նոր սարքավորումներով ենք զինել ցորենի գտման և լվացման արտադրամասը: Հին, մեխանիկական սարքերի մեծ մասը փոխարինել ենք պնևմատիկ(օդաճնշական) սարքավորումներով: Նոր տեխնիկայով է հագեցած նաև հացի արտադրամասը: Հարկ է նշել, որ թեև արտադրողականությունը մնացել է գրեթե անփոփոխ(օրվա կտրվածքով 70 տոննա), սակայն էապես բարելավվել է արտադրանքի որակը

կանում ստուգելու մեր արտադրանքի որակը և վերահսկելու այն բոլոր չափանիշներով: Մենք աշխատում ենք ոչ միայն Նոր տեխնոլոգիաներով, այլև Նոր մոտեցումներով և Նոր հոգեբանությամբ:

Նառությունը քողարկելը մեր պարագայում անհիմաստ է, քանի որ ԼՂՀ-ում գործում են բավական ցածր դրույքաչափեր: Ըստ այդմ՝ մեզ մնում է միայն աշխատանքները կազմակերպել գրագետ, գործող Նորմերին համապատասխան: Հարկային պետական ծառայության կողմից վերջերս իրականացված ստուգումները ցույց տվեցին, որ այդ առումով մեր ընկերությունը շոշափելի ձեռքբերումներ ունի: Հարկային դաշտի բարեկեցիկ պայմաններում աշխատելը առավել հեշտանում է բարեխիղճ գործելաոճ ցուցաբերելու դեպքում, ինչին մենք շարունակելու ենք հավատարիմ մնալ:

Ների թիվը դարձել է 125: Ի լրումն այս ամենի՝ հարկ է նշել, որ մեր ընկերությունն ունի Նորագույն սարքավորումներով վերազինված լաբորատորիա, որը հնարավորություն է ընձեռում գործնա-

-Հե՞շտ է աշխատել ԼՂՀ հարկային դաշտում:

-Մենք հստակ գիտակցում ենք, որ «սև» հաշվապահությամբ աշխատելը, շրջա-

ՀՆԴԿԱԶԱՎԱՐ ԵՎ ԾԽԱԽՈՏ՝ «ՄԱԳԻԱ»-Ի ՆՈՐ ԱՐԴՅՈՒՆՔ

Գյուղատնտեսությամբ զբաղվող «Մագիա» ՓԲԸ-ն բացահայտել է ոլորտի բոլոր գաղտնիքները տասնամյա փորձի ընթացքում՝ գերծմնալով մոգական հնարքներից: 2002թ.-ին ստեղծված ընկերությունն այն ժամանակ ուներ ընդամենը 7 աշխատող: Այսօր նրանք 31-ն են, իսկ սեզոնային աշխատանքների ժամանակ մի քանի անգամ ավելանում են: Ներկայում «Մագիա» ընկերությունը մշակում է 200 հա հող, ունի բանջարեղենի բոստաններ, խաղողի, նռան այգիներ, հացահատիկի արտեր: Չդադարեցնելով զարգացումն ընկերությունը փորձում է նոր մշակաբույսեր աճեցնել, և արդյունքն արդեն գոհացնող է:



«Մագիա»՝ ասել է թե՛ կախարդանք: Բայց այս կազմակերպության ստեղծման և կայացման հիմքում ոչ թե կախարդանքը, այլ քրտնաջան աշխատանքն է ընկած: Զենց դրա շնորհիվ է ընկերությանը հաջողվել հիմնադրումից առ այսօր հասնել բավական լուրջ արդյունքների: Ընկերության հիմնադիր-տնօրեն Գարիկ Միրզաբեկյանը, «Մագիա»-ի և անձամբ իր անցած ուղու մասին պատմելով, փորձում է հակադարձել սխալ պատկերացումները, թե հնարավոր չէ գյուղատնտեսությամբ զբաղվել և գոնե միջին եկամուտ ստանալ: «Ծնվելով Բերդաշենում ես իմ կյանքի հետագա ընթացքը ևս գյուղում եմ պատկերացրել: Իսկ գյուղում ապրել չի նշանակում վատ պայմաններում ապրել, պարզապես անհրաժեշտ է աշխատել, ինչը և արեցինք: 2002թ.-ին ստեղծեցինք «Մագիա» փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործունեություն է ծավալում Բերդաշենում», - պատմում է ընկերության տնօրեն Գ.Միրզաբեկյանը: Զիմնադրումից մոտ մեկ տասնամյակ անց «Մագիա»-ն զգալի ձեռքբերումներ ունի: 2011-ին շուրջ 100 հա հացահատիկ և մի քանի հեկտար բանջարեղեն են ցանել, ունեն 15 հա խաղող, 2 հա նուռ և նորույթ՝ ծխախոտ, որին 10 հա է հատկացվել: Տնօրեն

Միրզաբեկյանի հավաստմամբ՝ սպառման և իրացման հարցում իրենք դժվարություններ չեն ունենում. արտադրում են՝ ըստ պայմանագրի: «Նախապես ճշտում ենք պահանջարկը, հստակեցնում սպառողների մոտավոր շրջանակը և արտադրությունը կազմակերպում հենց այդ հաշվարկով», - գաղտնիքը բացահայտում է Գ.Միրզաբեկյանը և ավելացնում, որ ստացած բերքի մի մասը շուկա են հանում վերամշակումից հետո: Կազմակերպությունը ալրադաց ունի, շուտով կվերագործարկի նաև մակարոնի փոքրիկ արտադրամասը: Ֆերմեր Միրզաբեկյանը նաև խոստանում է հաջորդ տարի փորձել հնդկաձավարի մշակումը, սակայն այդ ճանապարհին հիմնական խոչընդոտը ոռոգման խնդիրն է: «Առանց երաշխավորված ոռոգման առաջարկվող նոր բույսերի մեծ մասի մշակությունը կշարունակի մնալ ռիսկային գործ», - պարզաբանում է ֆերմերը: Միրզաբեկյանը վստահեցնում է, որ անգամ Բերդաշենում, որտեղ ջրամբար կա, ամառային սակավաջուր օրերին ոռոգման խնդիր է ծագում: Դա ոլորտի զարգացումը խոչընդոտող

միակ գործոնը չէ: Մեկ այլ խնդիր է մասնագետների պակասը, իսկ առանձին դեպքերում՝ անգամ բացակայությունը: «Մագիա» ՓԲԸ-ն այսօր երեք տասնյակից ավելի աշխատակիցներ ունի, որոնք հիմնականում խորհրդային տարիներին են փորձառություն ձեռք բերել, իսկ ժամանակը կանգ չի առնում: «Այսօր Արցախում առաջարկվում են նոր մշակաբույսեր՝ հին, ավանդական մշակաբույսերի փոխարեն, հանրապետություն է ներմուծվում նոր դեղորայք, այս ամենը, բնականաբար, մեծամասամբ անձանոթ է հին մասնագետներին», - իր մտահոգություններն է բարձրաձայնում Գաղիկ Միրզաբեկյանը՝ նկատելով, որ դա ժամանակի խնդիր է: «Այսօր կառավարությունը զգալիորեն աջակցում է գյուղատնտեսության ոլորտին, որի շնորհիվ, կարծում եմ, շատ կարճ ժամանակահատվածում կլուծվեն այս խնդիրները, և կբարձրանա գյուղատնտեսության արդյունավետությունը», - համոզված է Գաղիկ Միրզաբեկյանը: Նույն լավատեսությամբ էլ «Մագիա»-ի տնօրենն ակնկալում է հաջորդ տարի ունենալ հնդկաձավարի առատ բերք: 

Զիմնադրումից մոտ մեկ տասնամյակ անց «Մագիա»-ն զգալի ձեռքբերումներ ունի: 2011-ին շուրջ 100 հա հացահատիկ և մի քանի հեկտար բանջարեղեն են ցանել, ունեն 15 հա խաղող, 2 հա նուռ և նորույթ՝ ծխախոտ, որին 10 հա է հատկացվել



Ստեփանակերտ, Կոմունյացների 25 հեռ.՝ (+37447) 943412

Ֆաքս՝ (+37447) 971542

www.ab.am, www.artsakhbank.am

Քաղաք-պետություն Սինգապուրում հանցագործության թիվը ամենացածրերից է աշխարհում: Սակայն դրան զուգահեռ օրենքներն այստեղ շատ խիստ են, անգամ գոյություն ունի մահապատիժ: 1991-2004թթ. իրականացվել է 400 մահապատիժ, որն ամենաբարձր ցուցանիշներից է աշխարհում: Հակառակ դրան՝ Սինգապուրը բիզնես ներդնելու իդեալական վայր է՝ ընկերություններին աջակցող հարկային օրենսդրության շնորհիվ:

ԱՐԵՎԵԼԱՍԻԱԿԱՆ ՎԱԳՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Սինգապուրը՝ բիզնեսի բարեկամ

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Սինգապուրում գործում է ընկերությունների հարկման մեկ աստիճանի համակարգ, որի դեպքում եկամուտները հիմնվում են միայն ընկերության մակարդակի վրա: Եթե ընկերության հիմնադիրը Սինգապուրի բնակիչ է, ապա նրա ստացած դիվիդենդներն ամբողջությամբ ազատվում են հարկերից ու մաքսերից: Ընկերությունների եկամուտը հարկվում է մեկ միասնական դրույքաչափով՝ 18 տոկոսով՝ անկախ նրանից՝ ընկերությունը տեղական, թե արտասահմանյան է: Ոչ տեղական ընկերությունների եկամուտը՝ արտասահմանյան աղբյուրներից ստացված և Սինգապուր չփոխանցված, ընդհանրապես չի ենթարկվում եկամտակարկով հարկման: Այս տարածքային սկզբունքով հարկային համակարգը նման է Ջիբրալթարի և Հոնկոնգի համակարգերին: Կորպորատիվ եկամտահարկից և

ծառայությունների ու ապրանքների դիմաց վճարվող հարկից բացի, սինգապուրյան ընկերությունները վճարում են սեփականության հարկ և, այսպես կոչված, «զինանշանի» տուրք: Անշարժ գույքի հարկը ֆիզիկական անձանց համար կազմում է վարձակալության պոտենցիալ արժեքի 4 տոկոսը:

ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Սինգապուրում հարկային վճարումների զգալի մասը կազմում է եկամտահարկը: Երկրորդը, ըստ նշանակության, տրանսպորտային համակարգի համար սահմանված հարկն է, որը բաղկացած է գրանցման համար կատարված վճարումներից, ճանապարհային հարկից, մեքենայում նստատեղերի քանակի, շարժիչի հզորության համար հատուկ հարկից: Երրորդը ներմուծման տուրքերն են և ակցիզային հարկերը: Սին-



գապուրում գոյություն ունեն ժառանգության, աճուրդների, ունեցվածքի գնահատման, անգամ մասնագիտական որակավորման հիմնադրամի ներդրումների համար նախատեսված հարկեր:

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սինգապուրն աշխարհի այն քիչ երկրներից է, որտեղ արտահանման ծավալների արժեքը գերազանցում է համախառն ներքին արդյունքի չափը: Արտահանման նպաստներից տարբեր ձևերով օգտվում է երկրի արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող ընկերությունների 90%-ը: Որպես կանոն՝ արտոնյալ հարկային ռեժիմը արտահանող երկրների համար 5 տարի է: Ենթադրվում է նվազեցնել այն ընկերությունների հարկային վճարումները, որոնք զբաղվում են սուրճի, կակաոյի, բնական կաուչուկի, փայտանյութի, բուսական ձեթի, մետաղների և հանքային հումքերի առևտրով: Այն ընկերությունները, որոնք արտահանում են ոչ ավանդական ապրանքներ (Սինգապուրում ավանդական են համարվում անագը, բնական կաուչուկը, արմավենու և կոկոսի յուղը, նավթը, անտառանյութը, համեմունքները) կամ յուրացնում են նոր շուկաներ, ստանում են նպաստներ արտահանման եկամտահարկից 5 տարվա ընթացքում՝ եկամուտների կեսի ազատման տեսքով՝ պայմանով, որ այդ ապրանքների արտահանման ծավալը տարեկան առնվազն 20 մլն սինգապուրյան դոլար լինի:

Սինգապուրի արտահանման պոտենցիալի ընդլայնման կարևոր գործոններից է արտահանման հարկերի բացակայությունը: Ապրանքների արտահանմանը նպաստելու համար պետությունն իր վրա է վերցնում ծախսերի մի մասը՝ կապված արտաքին շուկայում ապրանքների խթանման հետ:

Սինգապուրի օրենսդրությունը արտաքին տնտեսական կապերի ոլորտում աշխարհում ամենալիբերալներից է: Լիբերալությունը ներմուծման ոլորտում դրսևորվում է ոչ միայն չափավոր վճարների մակարդակով, այլ նաև զգալի թվով ապրանքներ հարկումից ազատելու ձևով: Սինգապուրի ներմուծումը ենթակա է լիցենզավորված հսկողության:

ՄԵՏԱՂԱԴՐԱՄԻ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԸ

Սինգապուրի տնտեսական առավելություններից են ներդրումային բարենպաստ միջավայրը, տնտեսական ազատության վարկանշային աղյուսակներում առաջատար դիրքեր զբաղեցնելը, կրթված և կարգապահ բնակչություն ունենալը, բարձր մրցակցային միջավայրը, բարեկեցության՝ կտրուկ բարձրացած մակարդակը:

Թույլ կողմերից է կախվածությունը Մալազիայի ջրի մատակարարումից, գրեթե բոլոր ապրանքատեսակների և էներգիայի ներմուծումը, մասնագետների, տարածքի պակասը:

Սինգապուրը զարգացած երկիր է՝ շուկայական տնտեսությամբ և ցածր հարկերով, որոնցում կարևոր դեր են կատարում բազմազգ կորպորացիաները: Համախառն ներքին արդյունքը մեկ շնչին ամենաբարձրներից է աշխարհում: «Համաաշխարհային տնտեսական ֆորումի» մրցունակության վարկանշում

Սինգապուրի տնտեսությունը 2009թ. 3-րդ տեղում էր: Սինգապուրը կոչում են Արևելասիական վագր, քանի որ տնտեսությունը արագ ցատկել է մինչև զարգացած երկրների մակարդակ: Տնտեսությունը խիստ կախված է արտահանումից, հատկապես՝ կենցաղային տեխնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, դեղերի:

1959-1990 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Անկախություն ձեռք բերելու ժամանակ Սինգապուրը փոքր, աղքատ երկիր էր, որն ստիպված էր անգամ ներկրել խմելու ջուր և շինարարական ավազ: Հարևան երկրներն ընկերական չէին տրամադրված, իսկ բնակչության 1/3-ը կոմունիստներին էր համակրում: Լի Կուան Յուի կառավարության տնտեսական զարգացման ռազմավարությունը հիմնված էր Սինգապուրը Հարավարևելյան Ասիայի ֆինանսական և առևտրային կենտրոն դարձնելու և արտասահմանյան ներդրողներին գրավելու վրա: Արդյունքում քաղաք հանրապետությունը դարձավ Էլեկտրոնիկայի խոշոր արտադրող: Այսօր Սինգապուրի տնտեսությունը կարող է շատ բաներով պարծենալ. այն համաաշխարհային խոշորագույն նավահանգիստներից մեկն է: Ըստ մեծության՝ նավթամատակարարման երրորդ կենտրոնն է (Հյուսթոնից և Ռոտերդամից հետո) և չորրորդը՝ կիսահաղորդիչների ոլորտում: Խոշոր ֆինանսական կենտրոն է Ասիայում՝ շատ բաներով Տոկիոյին և Հոնկոնգին չզիջող: 30 տարվա ընթացքում Սինգապուրը դուրս եկավ երրորդ աշխարհի երկրների կատեգորիայից՝ դառնալով տարածաշրջանի առաջատար:

ՇԱՅԱԿԵՏ ԲԻԶՆԵՍ՝ ՍԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ

Շատ երկրների տնտեսագետներ համարում են Սինգապուրը բիզնես ներդնելու իդեալական վայր: Այն ունի հիանալի ֆինանսական ենթակառուցվածք, քաղաքական կայունություն, միջազգային մակարդակի իրավական համակարգ: Այստեղ են աշխարհի 3500 առաջատար ընկերությունների բաժանմունքները և ավելի քան 120 օտարերկրյա կորպորացիաների ներկայացուցչությունները: Սինգապուրում գործում է հարկային համակարգ՝ խրախուսման ամբողջական մեխանիզմներով՝ ուղղված միջազգային ներդրողներ գրավելուն: Սինգապուրի տնտեսության հիմքում ընկած է բազմատեսակ ծառայությունների մատուցումը (տրանսպորտային, հաղորդակցական, տուրիստական, առևտրային): Սինգապուրցիների մոտ 75%-ը տարբեր ձեռնարկությունների բաժնետեր է: Վերջերս «CNN Time Warner Group»-ի հրապարակած հետազոտությունների արդյունքներով՝ Սինգապուրը զբաղեցնում է 5-րդ տեղն աշխարհում՝ որպես փոքր բիզնեսի բարեկամ: Սինգապուրում հաշվառված է շուրջ 130.000 փոքր և միջին բիզնես-ձեռնարկություն: Դա երկրի բոլոր ձեռնարկությունների 92%-ն է: Փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման համար Սինգապուրում ստեղծված է ամբողջ երկրի համար ընդհանուր «Spring» գործակալությունը: 



Ալ Կապոնե



Ուեսլի Սնայփս

Յայտնի մարդիկ հայտնի են ամեն ինչով, անգամ՝ հարկային խախտումներով: Տարբեր տարիներին հարկերից ամենից շատ խուսափած «աստղերից» ամերիկյան «TIME» ամսագիրը ձևավորել է 10 հոգանոց «աստղաբույլ»: Ցուցակում հայտնվել է ամերիկացի ամենից ազդեցիկ գանգստեր Ալ Կապոնեն: «Չոր օրենքի» (Сухой закон) զարգացման ժամանակ նա գլխավորում էր Չիկագոյի հանցավոր սինդիկատը: Սակայն կնքահորը օրենքի առջև կանգնեցրել է ոչ թե բազմաթիվ սպանությունների, այլ հարկերից խուսափելու փաստի բացահայտումը:

Տասնյակի մեկ այլ ներկայացուցիչ Վիլի Նելսոնը սեփական

փորձով համոզվել է՝ որքան շահեկան է երկրպագուներ ունենալը՝ անգամ հարկային խնդիրները հարթելու հա-

մար: 16.7 մլն դոլարի հարկ չվճարելու համար դատավորից ազատագրված վճիռ ստանալով՝ Նելսոնը թողարկել էր ձայներից՝ «Ո՞վ կգնի իմ հուշագիրը» խորագրով: Երգչի երկրպագու-

ները դա ուղղակի իմաստով էին ընդունել և աճուրդին գնել էին սկավառակը: Արդյունքում հարկայինների հետ հակամարտությունը տևել էր ընդամենը երեք տարի:


Ջարկերից խուսափելու բոլոր ճանապարհներն է փորձել «Բլեյր» եռագրության հերոսի դերակատար Ուեսլի Սնայփսը, սակայն 2008թ. դատապարտվել է՝ իր եկամուտը հարկայինից թաքցնելու փորձի համար: Վրդովված դերասանը կարողացել է միայն հայտարարել,

ՋԱՐԿԱՅԻՆ ԴԱՇՏ

«ԻՋԵՑՎԱԾ»

10

«ԱՍՏՂԵՐԸ»



Ռիչարդ Յեթ



Վիլի Նեյսոն



Լենա Յեյմսեյ

որ ԱՄՆ-ի հարկային ծառայությունը անօրինական կառույց է, իսկ ինքը ընդհանրապես պարտավոր չէ ոչ մի կոպեկ վճարել, քանի որ Ամերիկայում ժամանակավոր է բնակվում:

«Հարկեր վճարում են «փոքր մարդիկ», այլ ոչ թե խոշոր կորպորացիաները», - այս մտքի հեղինակը հյուրանոցային բիզնեսի թագուհի Լենա Յեյմսեյն է: Նրա համոզմունքը, սակայն, չի կիսել հարկային ծառայությունը, և 1989թ. Յեյմսեյնը դատապարտվել է 16 տարվա ազատազրկման՝ մի քանի միլիոն դոլարի հարկ չվճարելու համար:

Օրինախախտների ցուցակում է հայտնվել նաև բասկետբոլիստ Փիթ Ռոզը: Նախկին մարզիկը մի քանի օրինազանցություն է կատարել. նա չի հայտնել իր հոնորարների և մոլախաղի շահույթի մասին: Պատմությունը կրկնվել է 2004թ. Այդ անգամ նա տուգանվել է 1

մլն դոլարով:

Հեռուստատեսային «Ռեալիթի շոու»-ի աստղ Ռիչարդ Յեթը իր «Մոռացվածության» համար պատժվել է 51 ամսվա ազատազրկմամբ: Նա «Մոռացել էր» հարկ վճարել 1 մլն դոլարի շահույթի դիմաց:

10-յակում ընդգրկվել է ֆուտբոլի նախկին աստղ Ջեյ Սիմփսոնը: Նա հարկային պետական ծառայությանը պարտք էր 1.4 մլն դոլար: Սակայն այս հանցանքը չէ, որ վճռել է նրա ճակատագիրը: Ֆուտբոլիստը 33 տարի շարունակ պատիժ էր կրում Նեվադայի բանտում՝ գինված կողոպուտի համար:

Հելիո Կաստրոնեյվեսը կարողացավ հաղթել «Աստղի հետ պարելով» շոուում, բայց հարկայինին խաբել չհաջողվեց: Բրազիլացին մեղադրվեց ծովի մյուս կողմում ընկերություն ստեղծելու

և ԱՄՆ-ի հարկերը վճարելուց խուսափելու մեջ:

Կոմիկ դերասան Սինթադը «TIME» -ի կազմած ցուցակում է հայտնվել 2.5 մլն դոլարի պարտք ունենալու պատճառով: Վերջին տարիներին նրա անունը հիշատակվել է ոչ թե ֆիլմերի առիթով, այլ միայն հարկայինի հետ հակամարտության ենթադրությամբ:

Հարկեր վճարել չսիրող «աստղերի» տասնյակը եզրափակում է գործարար Ուոլթեր Անդերսոնը: Հեռուստահաղորդակցական ընկերություններից բավական խոշոր կապիտալ կուտակած գործարարը 2005թ-ին մեղադրվել է 200 մլն դոլարը գերազանցող հարկային պարտք ունենալու մեջ: Թեև Անդերսոնը հարկերից խուսափելու խորամանկ ծրագիր էր մշակել, բայց արդյունքում դա նրան արժեցել էր 400 մլն դոլարի տուգանք:

«ԵՐԵՍ ԱՌԱԾ»

ԻՏԱԼԱՅԻ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ ՉԵՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ ՎՃԱՐԵԼ ՀԱՐԿԵՐԸ

Իտալիայի կառավարությունը բյուջեի ծախսերը կրճատելու և հարկային վճարումներն ավելացնելու համար միջոցներ է ձեռնարկել, որոնց իտալիայի ֆուտբոլային ակումբների ֆուտբոլիստներն արձագանքել են գործադուլի սպառնալիքով: Այս մասին հրապարակել է «Հարկեր» ժուռնալը: Երբեք իտալիայի ֆուտբոլային ակումբների ֆուտբոլիստներն արձագանքել են գործադուլի սպառնալիքով: Այս մասին հրապարակել է «Հարկեր» ժուռնալը: Երբեք իտալիայի ֆուտբոլային ակումբների ֆուտբոլիստներն արձագանքել են գործադուլի սպառնալիքով: Այս մասին հրապարակել է «Հարկեր» ժուռնալը:

Երբեք իտալիայի ֆուտբոլային ակումբների ֆուտբոլիստներն արձագանքել են գործադուլի սպառնալիքով: Այս մասին հրապարակել է «Հարկեր» ժուռնալը: Երբեք իտալիայի ֆուտբոլային ակումբների ֆուտբոլիստներն արձագանքել են գործադուլի սպառնալիքով: Այս մասին հրապարակել է «Հարկեր» ժուռնալը: Երբեք իտալիայի ֆուտբոլային ակումբների ֆուտբոլիստներն արձագանքել են գործադուլի սպառնալիքով: Այս մասին հրապարակել է «Հարկեր» ժուռնալը:

5%-ը, իսկ 150.000 եվրոն գերազանցող եկամուտ ունեցող հարկատուները՝ 10%-ը: Նոր հարկատեսակի ներմուծումը հակասություն է առաջացրել իտալիայի ֆուտբոլային առաջատար ակումբների խաղացողների և դրանց ղեկավարների միջև: Պատճառն այն է, որ ֆուտբոլիստները, ըստ պայմանագրի, նախկինում չէին վճարում հարկ: Նրանց կատարվող վճարումների համար նախատեսված գումարից պահումները՝ հարկերի տեսքով, կատարում էին անմիջապես իրենց ակումբները: Սակայն այս տարվա պայմանագրերում այդ դրույթը բացակայում է. ֆուտբոլիստներն ինքնուրույն են ստիպված լինելու ստանձնել հարկային պարտականությունները: Սեփական եկամուտների չափի ակնհայտ նվազումն էլ դրդել է խաղացողներին նախազգուշացնելու, թե իրենք կբողոքարկեն նման որոշումը և գործադուլ կհայտարարեն, որը կհախտի ֆուտբոլի ազգային լիգայի մեկնարկի ժամանակը: Ե



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԱՊԱԳԱՆ ՍՏԱՅՈԳՈՒՄ Է UEFA-Ի ՆԱԽԱԳԱՅԻՆ

«ՈՒԵՖԱ»-ի նախագահ Միշել Պլատինիի կարծիքով Իսպանիայի և Իտալիայի գործադուլի պատճառն այն է, որ ֆուտբոլային շատ ակումբներ թաղված են պարտքերի մեջ և գտնվում են սնանկացման եզրին: «Ես մտահոգվում եմ եվրոպական պրոֆեսիոնալ ֆուտբոլի ապագայով», - հայտնել է Պլատինին ֆուտբոլային համակարգում հարկային փոփոխություններ կատարելու առիթով առաջացած դժգոհություններից և գործադուլից հետո: «Եթե ֆուտբոլը չի կարող զարգանալ միայն այն պատճառով, որ խաղացողներին աշխատավարձ չեն վճարում, սա լուրջ առիթ է տալիս անհանգստանալ», - հայտարարել է Պլատինին: Ըստ infox.ru կայքի՝ նա նաև նշել է, որ համամիտ է UEFA-ի քաղաքականության հետ՝ ուղղված լավագույն ակումբների անմիտ ծախսերը չափավորելուն: Ե



Michel Platini
UEFA President

